

Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՀԱՅՈՒԹԻԿԱ  
Институт  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ՄԵՐ ՏԵՍՏԵՎԱԿԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ



ՊԵՏՈՒԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929

338.98(47.92)

4-75

2802 - C1030/684  
ЕГС НАУК

1585

38-98(47925) Հ. ԿՈՍՄԱՅԱՆ

4-75

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТ  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ՄԵՐ ՏՆՏԵՍԻԿԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՈԼՅՈՎ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929



60177-66

ԹԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ  
Գրառելու № 2732 (բ.) Հը. № 1075 Պատվ. № 912  
Տիրամատ. 5000

## ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերներ, պեմզայի ու պղնձահանքերի հարցը չափազանց կարևոր նշանակություն ունի մեզ համար: Այդ հարցերը սերտ կերպով կապված են մեր յերկրի ինդուստրիացման հետ: Իսկ յերկրի ինդուստրիացումը, նրա արագ ընթացքը սոցիալիստական ռեկոնստրուկցիայի ուղիով մեր բոլոր աշխատանքների առանցքն է կազմում: Այդ հարցերի քննությունն ել ավելի կարևորագույն նշանակություն և ստանում այն տեսակետից, վոր մեր բացերն ու հաջողությունները նման կոնկրետ բնագավառներում պայմանավորում են մեր յերկրի հնգամյա պլանի իրականացումը յերեան են հանում այն պայմաններն ու հնարավորությունները, վորոնք վճռական նշանակություն ունեն յերկրի սոցիալիստական շինարարության հնգամյա պլանի լրիվ ու հաջող կիրառման համար:

Քիչ չի անցել այն պահից, ինչ յերկար ու լարված աշխատանքների հետևանքով ավարտվեց, քննվեց ու ընդունվեց հնգամյա պլանը:

Նախ 16-րդ համամիութենական կուսակալան կոնֆերանսը, ապա պրոլետարական գիլտատուրայի գերագույն մարմինը՝ Խորհուրդների 5-րդ համամիութենական համագումարը քննեց ու վավերացրեց այդ պատմական դոկումենտը, վորը շատ ճշգրիտ կերպով վորակում են իրը «մեծ աշխատանքների» պլան, վորովհետեւ այն ինդիբները, վոր զնում և մեր առաջ այդ պլանը շինարարության բոլոր ասպարեզներում, իսկապես վոր հսկայական ու աննախընթաց աշխատանքներ են:

Հնիթացիկ տնտեսական տարին հնգամյա պլանի առաջին տարին և այդ տեսակետից նա շատ բան պիտի սովորեցնի մեզ հետազա հաջող աշխատանքների համար: Մինչև հնգամյա պլանի առաջին, վճռական տարրա վերջը մնացել է կարճ ժամանակ: Պահանջն մարմինները տեսական աշխատանք են տանում ճշտելու հնգամյակի յերկրորդ տար-

զա՝ 29—30 թ. վերստուգիչ թվերը։ Այստեղ պիտի նշել, վոր շատ քիչ ե արված հնգամյա պլանի ելության ժողովրդականացման համար, վորպեսզի լայն մասսաները լավ ծանոթ լինեն նրա կոնկրետ բովանդակության հետ, վորպեսզի պատշաճ կերպով բացատրվեն արտադրողական խնդիրները, վորպեսզի հասկանալի լինի ամեն մեկին, թե ինչ ե տալիս նրա իրականացումը լայն մասսաների տնտեսական ու կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար, վորպեսզի ամեն մեկը գիտակցի, թե վորչափ և ամրացնում նա սոցիալիստական յերկրի դասակարգային դիրքերը հանդեպ թշնամի կապիտալիստական յերկրների այդ բոլորի համար հարկավոր և ավելի յերկար, տոկուն ու սիստեմատիկ աշխատանք։

Պարզ ե, վոր ընթացիկ շրջանի ամենաելական հատկանիշը կայանում է նրանում, վոր ժողովրդական տնտեսության սոցիալիստական սեկոնդարուկցիան ըեկման մի շրջան և պրոլետարիատի կողմից սոցիալիզմի հաղթանակի համար տարվող պայքարի ձանապարհին։ Պրոլետարիատը ներկա շրջանում ել ավելի ամրացնում և իր դասակարգային դիրքերը, նա ել ավելի զարգացնում և, ուժեղացնում և սոցիալիստական առաջխաղացումը ժողովրդական տնտեսության մեջ յեղած ու դեռևս առաջ յեկող կապիտալիստական ելեմենտների դեմ, հիմնվելով իր տնտեսական գլխավոր ու հրամայող դիրքերի հետագա ամրացման վրա, հիմնվելով բանվոր դասակարգի և չքավորի ու միջակի հետ դաշինքի ամրացման բնագավառում կուտակած նվաճումների վրա։

Բոլորի համար պարզ պիտի լինի, վոր այն պայքարը, վորը բանվոր դասակարգը Կոմկուսի դեկավարությամբ տանում եր ու տանում և կուլակի, մասնավորի ու առնասարակ կապիտալիստական ելեմենտների դեմ, ներկայում թեակոխել և զարգացման հետագա շրջանը։ Այժմ հարցը վոչ միայն նրանում ե, վոր սահմանափակենք կապիտալիստական ելեմենտները, այդ դեռ բավական չե. կամ, ավելի ձիւտ տասած, այդ այլևս բավական չե, հետեւապես սխալ և միայն սահմանափակման քաղաքականությունը։ Այժմ հարցը դրված ե այսպես. կապիտալիստական ելեմենտները վոչ միայն պիտի սահմանափակվեն, այլ և արմատախիլ արվեն, վոչնչացգին։ Մենք թեակոխել ենք հեղափոխության զարգացման այն շրջանը, վորը հանդիսանում է կապիտալիզմի արմատները տեղահան անելու շրջան, կապիտալիստական ելեմենտների արմատախիլ անելու շրջան։

Մեր կուսակցական բոլոր մարմինների վորոշումներում կարմիր թելի նման անցնում է հեղափոխության զարգացման ընթացիկ

շրջանի այն անհրաժեշտ ու հրամայողական դրույթը, թե ողջիամատական յերկրի միջազգային ու ներքին դրույթյունը վճռականորեն պահանջում է այսոր ինդուստրիացման արագ ու լարված թափը։ Սոցիալիստական ինդուստրիայի ուժեղ ու արագ թափի ծավալումն ու զյուղատնտեսության համայնացումը կազմում են մեր կուսակցության անելիքների ամենակենտրոնական խնդիրները։

Այդ ինդիբրների հաջող լուծումն ու, հետեւապես, Կոմկուսի գլխավոր գծի իրականացման անհրաժեշտությունն ե, վոր կազմում և մեր սոց շինարարության հնգամյա պլանի առանցքը։ Հնգամյակը մեր կուսակցական դիրքեկտիվների, նրա գլխավոր գծի նյութականացումն ե։

Դա այն ծրագիրն ե, վորի միջոցով մենք պիտի լիկվիդացիայի յենթարկենք մեր յերկրի տնտեսական-կուտարական հետամնացությունն ամենակարճ ժամանակամիջոցում, այնպես, վոր պատմական մինիմալ ժամանակաշրջանում վոչ միայն հասնենք ժամանակակից առաջադեմ կապիտալիստական յերկրների տեխնիկա-տնտեսական մակարդակին, այլ և անցնենք կապիտալիստական յերկրների տեխնիկական ու տնտեսական մակարդակից։ Վոչ միայն հասն ել, այլ յեզ անցնել։

Այդ ձեռվ մենք կարող ենք ապահովել սոցիալիստական շինարարության հաջող վերելքը, այդ ձեռվ կարող ենք ամրացնել մեր յերկրի պաշտպանունակությունը, այդ ձեռվ կարող ենք բարձրացնել քաղաքի ու գյուղի լայն աշխատավոր մասսաների կյանքի մակարդակը։

Մեր սոցիալիստական շինարարության հնգամյա պլանն արգելունարեական ձեռնարկությունների ու գյուղատնտեսության արտադրողականության հասարակ քանակական բազմապատկումը չե միայն։ Հնգամյակը մեր յերկրի տնտեսական ու տեխնիկական վերակառուցման պլանն ե նոր տեխնիկակի հիմքերի վրա։ Զի կարելի այստեղ չըհիշել ընկ. Լենինի այն միտքը, վոր իր ժամանակին նախատեսելով մեր յերկրի հետագա զարգացման ուղիները, միենալուն ժամանակ պարզ ու հստակ կերպով արտացոլում ե մեր կուսակցության տնտեսական ու քաղաքական վողջ ծրագիրը։

«Սոցիալիզմը և խորհրդապետությունը՝ պլանա ելեկտրիֆիկացիան—ասել և ընկ. Լենինը։ Յեվ իսկապես, ի՞նչ ե ելեկտրիֆիկացիան, իեթե վոչ մեր արդյունաբերության ու առնասարակ ժողովրդական տնտեսության վերակառուցումը նոր եներգետիկ (շարժիչ ուժի) հիմքի վրա։ Յերկրի տեխնիկական վերակազմակերպումն ու վերակառուցումը մի կողմից հնարավորություն ե տալիս բանվոր դասակարգին ավելի ժամանակ ինայելու իր կուլտուրական առաջադիմության

համար, մյուս կռղմից մինհմալ չափով ուժ ու միջոցներ ծախսելով՝ մաք սիմալ կերպով՝ բավարարում ե նրա նյութական կարիքները։ Յեկ այդ վերաբերում ե զոչ միայն արդյունաբերության, այլ և հավասարապես և գյուղատնտեսության։ Արդյունաբերության զարգացման հետ միասին մենք պիտի զարկ տանք և մեր գեռնես շատ հետամնաց գյուղատնտեսության։ Դրանումն ե սոցիալիստական ինդուստրիացման ամենաելական հատկանիշներից մեկը։ Պետք ե հասկանալ զոր քանի զոր մեր գյուղատնտեսության մեջ գեռնես ռապատվավոր դեր ունեն արորն ու չութը, քանի զոր գեռնես գերիշխող տեղ ե բռնում մասր ու մանրական անհատական տնտեսությունը, զոչ մի խոսք չի կարող լինել սոցիալիստական շինարարության հաջող ավարտման մասին։

Կուսակցությունն այսոր իր առաջնակարգ խնդիրներից մեկն է գարձրել մանր ու մանրագույն գյուղական տնտեսությունների միացումն ու փոխանցումը խոշոր համայնացրած տնտեսությունների։ Խորհրդագիտն խոշոր տնտեսությունների կառուցումը, արտադրական կոռպերացիայի ու կոլեկտիվիզացիայի լայն ծավալումը ներկայումս կազմում ե կուսակցության դեպի գյուղն ունեցած քաղաքականության ամենահիմնական խնդիրը։ Ամեն միջոցով ոգնելով չքավոր ու միջակ տնտեսություններին, այնուամենանիվ մենք պարզ պիտի գիտակցենք ու լավ ըմբռնենք, զոր միայն կոռպերացիայի, կոլեկտիվ տնտեսությունների ու խորհրդակին խոշոր տնտեսությունների ուժեղացման ու ծավալման ուժիներով ե պայմանագրվում գյուղատնտեսության արտադրողական ուժերի վճռական վերելքը, գյուղի նյութական ու կուտուրական բարդավաճումը և կուլակի եքսպլոատացիայի ու գյուղի աղքատության վերացումը։

Ցերկի արտագրողական ուժերի աճման ու վողջ քաղ. տնտեսության ուեկոնստրուկցիայի բանալին յերկրի ինդուստրիացման մեջն ե, իսկ սոցիալիստական ինդուստրիացման ձեռկերպումն ու նյութականացումը և մեծ աշխատանքների հնագամա պլանն ե։

Խորհրդային Հայաստանի սոցիալիստական շինարարության հնագամյա պլանը սերտ կերպով կապված ե համամիտութենական հնդամա պլանի հետ։ Մեր հնգամյա պլանը, վորը մեր կուսակցության դիրեկտիվների, նրա գլխավոր գծի նյութականացումն ե, այսոր պիտի կազմի զոչ միայն տնտեսավարների, այլ և մեր բոլոր կուսակցական, խորհրդային, արհմիտութենական ու կոռպերատիվ մարմինների աշխատանքների առանցքը։ Ավելին կասենք. ամեն մի կուսակցական, կոմիտիտ, կին պատգամավորուհի, ամեն մի քանվոր, բատրակ, չքավոր ու միջակ գյուղացի, ամեն մի մասնագետ, խորհրդային աշխատավոր ու

ազնիվ քաղաքացի պիտի իր մասն ունենա այդ պատմական ու պատվա- վոր գիրեկտիվի լրիվ կիրառման աշխատանքներում։

Այդ հիմնական ու գլխավոր խնդիրների լուծման հետ կարևոր նշանակություն ունեն յերկու ուշագրավ պայման։ Ամենից առաջաշ- խատակոր մասսաների, առաջին հերթին պրոլետարիատի ուժերի մորի- լիզացիան, բանվոր դասակարգի ու վողջ աշխատավոր մասսաների ներգրավումը սոցիալիստական շինարարության գործում, սոցիալիս- տական մրցման մեծագույն ծավալումը, ինքնաքննադադատության հետ- տագա զարգացումը, խորացումը, ուժեղացումն ու անողոք պայքար պետական ապարատի բյուրոնկրատիզմի գեմ։

Ցերկրորդ՝ կուսակցական գծի անշեղ ու հետևողական կիրառու- մը. անհաշտ ու գտածն պայքար մղելով ամեն տեսակի տատանում- ների գեմ և առանձնապես ու գլխավորապես ուժեղ հարվածելով ըն- թացիկ շրջանի գլխավոր վտանգը հանդիսացող աջ ոպպողիցիայի ու հաշովողականության գեմ, վորոնք, ինչպես ավելի ու ավելի պարզ ցույց տվին վերջին ամիսները, զոչ այլ ինչ են, ինթե վոչ լինինան դիրքերի հանձնումը յերկրի թշնամի ուժերի ազդեցության տակ։ Մեր աշխատանքների բոլոր բնագավառներում այս վերջին տարում կե- ն պիտի ել ավելի ուժեղացնի լայն բանվորական մասսաներում աջ վտան- գի գեմ տարվող բացատրական աշխատանքները, պայքարելով, դիմա- կազերծ անելով, կոնկրետ ու պրակտիկ աշխատանքների ժամանակ յերեան հանելով աջ ոպպորտյունիստական, մանր-բուրժուական տա- տանումներն ու սխալները, վախկու հաշտվողականությունն ու ան- սկզբունքայնությունը։

Կարելի՞ յե ասել արդյոք, վոր վերը հիշված բոլոր պայմաններն ու հնարավորություններն ըստ ամենայնի ունենք ու ամեն ինչ կար- գին ե։ Վոչ, իհարկե։ Ցերե աջ թեքման ու հաշտվողականության գեմ տարգող սիստեմատիկ, աշխատանքների, քաղաքական հաջող մասսայական աշխատանքներ տանելու համար կարելի յե գովել մեր կազմակերպությունները, նույնը չի կարելի անել այն բոլոր պայման- ների իրագործման համար, վորոնք սոցիալիստական շինարարության կոնկրետ աշխատանքների ղեկավարության են վերաբերում, մանա- վանդ յերը այդ վերաբերում ե հնգամյա պլանի ժողովրդականաց- ման աշխատանքներին։ Իհարկե, խոսք չի կարող լինել այն մատին, վոր մենք այդ վերջին հարցերումն ել ունենք նկատելի նվաճումներ։ բայց քիչ են այդ նվաճումները՝ համեմատած այն ահազին ու պատասխա- նատու անելիքների հետ, վոր դրված են ալսոր մեր բոլոր կազմակեր- պությունների առաջ։ Մենք պետք ե մեր գլխավոր ուշագրությունը կեն-

արոնացնենք բացերի վրա։ Յեթե մտանանք հարցին ընթացիկ շրջանի վոգուց բղիսով նոր ձեռով, նոր սեթողներով աշխատելու տեսակետից, պիտի ամենք, վոր ինչպես տնտեսական շինարարության կոնկրետ, ամենորդա աշխատանքների զեկավարության հարցում, նույնպես և հնգամյա պլանի ժողովրդականացման, լայն մասսաների կողմից ցուցաբերած ինիցիատիվայի ու ակտիվության հաջող կազմակերպման ու լրիվ ոգտագործման ասպարիզում մեր շատ ստորին որգանները, ինչպես փաստերը են ցույց տալիս, դեռ շատ պակասներ ունեն։ Մի կողմից անժխտելի փաստ ե բանվոր դասակարգի, չքավորի, բատրակի ու միջակ գլուղացիության լայն մասսաների ակտիվությունը, մյուս կողմից գեռուս չի կարելի ասել, վոր մենք հաջող կերպով, դյուրին, ըմբռնելի անց ենք կացրել հնգամյակը մասսաների բովով։ Մեզ հարկավոր ե, վորպեսզի ամեն մի բանվոր, չքավոր ու միջակ գյուղացի լավ հասկանան ու լավ գիտակցեն կապիտալիզմի հիմքերը տեղահան անելու պլանը։ Մեր առաջ դրված ե բավականին ըուրջ ինդիր—հնգամյա պլանը վերածել կոնկրետ փաստերի ու հասկանալի դարձնել այն ամեն մի գործարանի, ամեն մի ձեռնարկության, ամեն մի գյուղի վերաբերմածք ու այդպիսով առաջ տանել աշխատավորական լայն մասսաները՝ ունեծ աշխատանքներ։ ի պլանի իրագործման ուղղով։

Հնգամյա պլանը միայն նրա նյութական ներդրությունների մեջ չի կայանում. բանը միայն այն չե, վոր հինգ տարվա ընթացքում մենք այսքան յերկաթ, չուգուն, այսքան շինարարական մատերիալ պիտի տանք ու ծախսենք վորոշ տեխնիկական շինարարության համար. այստեղ ահազին նշանակություն ունի և վճռական դեր ե խաղալու այն հարցը, թե ինչ ձևով ենք ծախսելու ալդ յերկաթը, այդ պղինձը, այդ շինարարական նյութերը, ալիքնքն այդպիսիները. ծախսելու յեղանակը, դրա սոցիալական ձեր։ Յեթ վերջապիս այստեղ հնկայական նշանակություն ունի, թե ինչպես և վորքան հաջող մենք կարող կլինենք շարժել ու վոտքի կանգնեցնել աշխատավորական լայն մասսաները, ամբողջ կուսակցական, կոմիերիտ, արհմիութենական ու պրոլետարիատի այլ ջոկատները, վորոնց ուսերի վրա միայն կարելի յե իրագործել այդ հնկայական պատմական դիրեկտիվը։ Լայն մասսաների, առաջին հերթին արհմիութենական մասսաների ուժերի մորիլիզացիայի տեսակետից կարող ենք ասել քիչ ե արքած։ Զի ոգտագործված լայն մասսաների վոգերությունն ու պատրաստականությունը, նրա ակտիվությունը, նրա ակտիվությունը ու ինիցիատիվան հարկավոր չափով։ Զեն կարողացել մեր ստորին կազմակերպություններն ամբող-

ջական կերպով իրագործել ներկա շրջանի պահանջներից բղխող աշխատանքի նոր ձեռը. կասկածից դուրս ե, վոր ալդ բնագավառում գեռուս չափազանց շատ անելիքներ կան. չոգտագործված հնարագորություններ ունենք, և ահա ալդ ուղղությամբ պիտի ծավալել մեր տեղական կազմակերպությունների ուժերը։

Ահա այսպես պիտի մոտենալ հարցին, յեթե իրոք մենք ուզում ենք լրիվ կիրառել հնգամյա պլանը, յեթե ուզում ենք, վորպեսզի մեր բոլոր տեղական կուսամարմինները սերտ կերպով մոնենան բոլոր անտեսական հարցերի կոնկրետ գեկավարության, յիթե ուզում ենք կատարած լինել ներկա շրջանի ամենակենտրոնական դիրեկտիվներից մեկը։ Հնգամյակի իրագործումը պահանջում է նոր թափ, նոր գոգեվորություն, աշխատանքի նոր ձեռք, նա պահանջում է հին, արդեն անպիտք յեղանակներից վճռական ազատագրում։ Ուեկոնստրուկցիայի շրջանը, վոր կապված ե դասակարգային պայքարի սրման հետ, ավելի մարտական թափ ե պահանջում։

Ժամանակն ե արդեն հասկանալու այն միտքը, վոր ունկոնստրուկցիայի շրջանի պայուաններն ալլ են, քան վերականգնման շրջանի պայմաններն, ու այլ դրոշմ են դնում մեր բոլոր աշխատանքների վրա։

Մենք չպետք ե վոչ մի բոպե սոռացության տանք հնգամյակը կազմելիս 15-րդ համագումարի աված դիրեկտիվները։ Այնտեղ առանձնապես շեշտված ե, վոր անհրաժեշտ ե «ամենալավն կերպով ներգրավել պրոլետարական շարքերը շինարարական մեծ աշխատանքների հոսանքը», վոր անհրաժեշտ ե «յերկրի տնտեսական վերելքի շուրջը» հսկայական աստիճանի մորիլիզացիայի յենթարկել գյուղացիական լայն մասսաները։ Այս 16-րդ կուս. կոնֆերենցիան հնգամյակը լրիվ կիրառելու հարցում բավականին պարզ, հասկանալի ու միննույն ժամանակ հրամայողական կերպով շեշտում ե մեր բոլոր անելիքները հիշված բնագավառում։ Հարկավոր ե, վորպեսզի ամեն մի փրտակից բանվոր, ամեն մի ակտիվ գյուղացի վոչ միայն պարզ պատկերացնի հնգամյակի գաղափարը, հարկավոր ե վորպեսզի նրանք պարզ գիտակեցնեն այդ ծրագրի գոնե ամենահիմնական մասերը, նրանց կոնկրետ, թվական, պրակտիկ արտահայտությամբ։ Մենք շատ ճիշտ կերպով անվանում ենք հնգամյակը ունեծ աշխատանքների պլան, մենք տեսնում ենք այդ պլանում մեր դեպքի սոցիալիզմը տանող տնտեսական վերելքի անհաղթ ուղին։ Մենք այսոր կանգնում կիրառելով հնգամյակի գիտական իսկ անունը կապիտալիզմի մնացորդներն ու նրա նոր առաջացած ու առաջացող ելիմենտները, մենք փոխում, փո-

փոխում ենք մեր յերկրի տնտեսական կերպարանքը, նրա տոռողագաթիան, մենք հեղաշրջում ենք առաջացնում արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ նոր տեխնիկայի նոր հիմքերի վրա: Բայց քչերը կան արդյոք կուս. ակտիվից, մանավանդ կուսակցական միջակներից, վորոնք լավ չեն պատկերացնում Անդրկովկասում կամ հենց Հայաստանում կառուցվելիք գործարանների ու այլ արդյունաբերական ձեռնարկների աշխատանքները. ավելին կարելի յե ասել. շատերը վոչ միայն լավ չեն պատկերացնում, այլ նույնիսկ չգիտեն, թե վհրտեղ, քանի, ինչ ճեղվ են կառուցվելու դրանք, ու բնչ են տալու նրանք մեր ժողովրդական տնտեսությանը:

Այստեղից ել ծագում ե մեր անելիքներից մեկը՝ անընդհատ ու համար պայքար հնգամյակի ժողովրդականացման համար, հնգամյակը դեպի մօստաները. Այդ լողունքը պիտի կենդանի ու գործնական դիրեկտիվինի մեր բոլոր կազմակերպությունների համար:

Ճիշտ ե, ինչպես ցուց են տալիս տեղական կազմակերպությունների հաշվետու զեկուցումներն ու մեր հետազոտությունները, համարյա բոլորն ել այդ հարցի քննությունն անց նն կացըել կուս. ավտիֆների, կուս. բջիջների ու վորոշ չափով անկուսակցական բանվորական ժողովներում, բոլորն ել այդ հարցը շոշափել են 18-րդ կոնֆերենցիայի արդյունքները քննելիս և այլն, բայց չի կարելի դրանով բավականանալ, չի կարելի ասել, վոր մենք անց ենք կացըել կամպանիա և արդեն կատարել ենք սեր պարտականությունը: Հարկավոր ե, վարպեսզի ամեն մի գիտակից ինժեներից սկսած մինչև ամենից հետամնաց բանվորն ու ակտիվ գլուղացին կարողանան ըմբռնել հնգամյակի եյությունը, նրա թափը:

Հնգամյակի թափի հարցը կարելորագույն նշանակություն ունի մեզ համար. Զե վոր ալդտեղ ե, վոր մեղանչում են շատերը մեր կուսակցության գլխավոր գծի դեմ, հենց այդ հարցում ել նրանք յերեւան են հանում թեքումներ ու սկզբունքային սխալներ:

Ամեն մի կուսակցական, կոմիերիտ, բանվոր ու ակտիվ գլուղացի պիտի իմանա, թե ինչպես ե աճում մեր սոցիալիստական սեկտորը, թե վորքան հնգամյակն ազատագրում ե մեր յերկիրը կապիտալիստական յերկրների կախումից, թե վորքան մեր յերկիրը պաշտպանունակ ե դառնում և այնու նա պետք ե պարզ պատկերացնի, թե ինչու հնգամյակի առանցքն ե կազմում ծանր արդյունաբերության զարգացումը վորպես հենակետ ու բազա ամբողջ տնտեսական ծրագրի ծավալման ու իրագործման տեսակետից, թե ինչու հնգամյակն առաջարկում ե արտադրության միջոցների, արտադրության մաքսիմա-

զարգացման թափի, թե ինչու հնգամյակն ապահովում ե մեզ կապիտալիստական յերկրների կախումից ու տնտեսապես ավելի անկախություն և տալիս սոցիալիստական հայրենիքին, թե ինչպես հնգամյակը կենտրոնացնելով մեր բոլոր ուժերը ծանր արդյունաբերության, եղեկտրիֆիկացիայի, մետալլուրգիայի, քիմիական արդյունաբերության, գյուղատնտեսական գործիքների արդյունաբերության վրա՝ նպատակ ունի բարձր ու նոր տեխնիկական բազա կառուցելու:

Գետք ե լավ հասկանալ, թե ինչ են նշանակում աջ թեքման, աջ ոպապուրայունիստների ու պանիկյորների ճիշերն ու գոռոցը և հաշտվողական անսկղբունքայնությունը, նրանց վոտնձգություններն ու վայրի ամսունը հնգամյակ պլանի մասին, և թե ինչ թվական, կոնկրետ ու նասունը հնգամյակ պլանի մասին, և թե ինչ թվական, կոնկրետ ու պրակտիկ ամիալը, նրանց վոչ լենինյան դրույթը, վերջապես նա պիտի իմանա արդյունաբերության զանազան ճյուղերի փոխհարաբերությունները հնգամյակում և նրանց անհրաժեշտությունը պատճական այս մոմենտում:

Իհարկե, սխալ ու վտանգավոր ե վոմանց կողմից արտահայտվող այն միտքը, թե հնգամյակի բոլոր հարցերը հասկանալու համար հարկավոր ե համալսարանական կրթությունը ունենալ: Պատահում ե յերեմն, վոր համալսարանական կրթություն ունեցողները շատ աններելի սխալներ են անում (գիտակցաբար թե անգիտակից՝ դամենուն ե գործի հաջողության տեսակետից), և նրանց բանվորներն ին սովորեցնում: Ամեն մի բանվոր, ամեն մի ակտիվ գյուղացի շատ լավ կկարողանա հասկանալ այդ բոլորը: Նրանք պիտի իմանան, վոր հնգամյակի վերջը մեր յերկրում արդյունաբերական ապրանքները շ և կես անգամ, իսկ գյուղատնտեսական մեկ և կեսից ավելի անգամ աճում են, վորը կնշանակե, վոր արդյունաբերականը 3 անգամ, իսկ գյուղատնտեսական ապրանքներն ավելի քան մեկ և կես անգամ ավելի են լինելու, քան նախապատերազմյան շրջանում: Նա պետք ե իմանա, վոր հիմնական ներդրումների գումարը 5 տարվա ընթացքում կազմում ե 64,5 միլիարդ ուռելի, արդյունաբերության մեջ՝ 16,4 միլիարդ՝ գյուղատնտեսության մեջ՝ 23,2 միլիարդ՝ չտեսնված հսկայական գումար: Դրա հետևանքով յերկրի հիմնական ֆոնդերը հասնում են մինչև 128 միլիարդ (1927—28 թվին՝ 70 միլիարդ): Արդյունաբերությունն աճում ե յերկու և կես անգամ, եղեկտրիֆիկացիան 5 անգամ, արանգպորտը՝ 70 տոկ., գյուղատնտեսությունը՝ 35 տոկոս: Ահա մեր յերկրի ժողովրդական տնտեսության գլխավոր ուղին, այն ուղին վոր մեր յերկիրն ագրարային ինդուստրիալ յերկրից անցնում, դառնում ե ինդուստրիալ ագրարային:

Այս բոլորը հասկանալի պիտի լինի մեր շարքային ընկերներին, մեր բանվորներին, մեր գյուղացուն. Հիշչալ՝ ճյուղերի ուժին զարգացումը հանդիսանում է հիմք, վորպեսզի կարողանանք իրականացնել շենքնյան այն լոգունգը, վոր ասում ե. «Դօրհատ և ուղարկած ընդհուպ մոտեցել ենք այդ լոգունգի իրականացմանը արդյունաբերության ասպարիգում, յերկում ե հետեւյալից: Ելեկտրական եներգիա արտադրելու ասպարիգում Միությունը տասերորդ տեղից փոխադրվում է չորրորդ տեղը (Ամերիկայից ու Գերմանիայից հետո), չուգունի արտադրության գործում՝ վեցերորդ տեղից յերրորդ տեղը (Ամերիկայից ու Գերմանիայից հետո): Հնդամյակի ընթացքում գյուղին ընդամենը տալիս ենք 2 և կես միլիարդ արժողությամբ գյուղատնտեսական մեքենաներ (յերկու և կես անգամ ավելի այն քանակից, վոր այժմ ունի գյուղը): Գյուղացին ու բանվորը պիտի իմանմն այս, թե չե: Նա պիտի իմանա նաև, վոր ապրանքալին սովոր հիմնականում վերանում ե:

Հիմնականում լուծվում ե նաև հացահատիկների՝ պլորբեմը շնորհիվ այն հանգամանքի, վոր ծավալվում ե կողեկտիվիզացիան, խորհրդային տնտեսություններ են ստեղծվում (հներն ուժեղանում են), ու կազմակերպվում ե չքավոր ու միջակ տնտեսությունների բարար ոժանդակությունը։ Նկատելի չափով բարձրանում ե բանվոր դաստկարգի ու առնասարակ աշխատավոր մասսաների կենցաղային, հետեագես և կուլտուրական դրությունը։ Հնդկամլակի վերջն ամենուրեք պիտի կիրառվի լոթամյա բանվորական որը, բանվորների ու աշխատավարձն աճում ե 71 տոկոսով, գյուղական բնակչության յեկամուտները՝ 67 տոկոսով և այլն։

Պարզ ե, վրու այս հսկայական նվաճումներն ել ավելի ամրացնում են բանվոր դասակարգի դեկավար՝ դերը գյուղացիության վրա ու ել ավելի ամրացնում սմիշկան, մանավանդ նրա նոր ձևերը, ել ավելի ամրացնում բանվոր դասակարգի՝ դիկտատուրալի քաղաքական ու տնտեսական դիրքերը: Բայց այդ ամենն իմանալը բավական չե. ամենադիտակից ինժեներից սկսած մինչև ամենավերջին ակտիվ բանվորն ու գյուղացին պիտի իմանան այն բոլոր դժվարությունները, վորոնց հետ կապված ե մեր հնգամյակի իրականացումը դասակարգային պայքարի սրման ներկա զրջանում: Հարկավոր ե այդ դժվարությունների հետ լավ ծանոթ լինել, հարկավոր ե պատասխանառու լինել այդ ամեն աշխատանքների պլանն իրագործելու համար:

պատասխանատու լինի մեր տնտեսական, ապա և քաղաքական հարցերի հաջող լուծվան համար: Այլազես ինչ դատարկախոսություններու անոգուտ արտասահնություններ են, թե մենք հսկայական ռեզերվ-ներ ունենք, թե դրանց մեջ ահազին վոգելորություն ու ինչիցիատիվա կա, թե այդ բոլորի վրա հենվելով մենք անպայման կլառուցենք սոցիալիզմը: Այդ բոլորը դատարկաբանություններ կլինեն, յեթե ամեն մի բանվոր, ամեն մի գործարան չդիտակցի, վոր նա իր վրա վերցնում է պատասխանատվություն վոչ միայն մեր յերկրի, այլ և համաշխարհակին բանվորության առաջ: Պիտի ասել, վոր յերբեմն շատ պատասխանատու ընկերներ չափաղանց անպատամիխանատու վերաբերմունք են ցույց տալիս դեպի այդ հարցերը, յերբեմն միայն բավականանում են ազդ հարցերի մասին տոռնական ճանախոսություններ անելով: Մեզ հարկավոր է պատասխանատվություն, մեզ հարկավոր ե գործ: Թե չե, ինչպես մի անգամ ասել ենք, հին զեկավարություն—նոր զեկավարություն, հին զեկավարություն—նոր զեկավարություն ասելով ճնշամյա պլանը չի իրականանա (ծիծաղ): Հարկավոր ե, վորպեսզի ամբողջ կուսակցությունը, պրոֆմիությունները, խորհրդային աշխատողները, ամեն մի բանվոր, ու գլուխացի լարեն իրենց բոլոր ուժերն ու պատասխանատու զգան իրենց այդ հսկայական ծրագիրը լուծելու համար:

Զափազանց մեծ սխալ կլիներ, յեթե մենք հանգիստ նստելինք և սահմանափակվելինք միայն նրանով, վոր 16-րդ կոնֆերանսի, հետևապես և հնդամյակի մասին արդեն կսմապանիա տարվել ե, և մեր մասսան ամեն ինչ գիտե, ամեն ինչ լավ ե պատճերացնում: Զափազանց սխալ ե այդպիսի մոտեցումը: Պետք ե տանել այդ ամբողջ աշխատանքը սիստեմատիկ կերպով, ամենորյա կոնկրետ աշխատանքի միջոցով՝ Մեր բոլոր տեղական կազմակերպությունների, մեր բոլոր տեղական որդանների աշխատանքի հաջողությունն այսոր պետք ե չափել ուրիշ չստիանիշով, այսինքն այնպիսի չափանիշով, վորը ցուց ե, տալիս, թե այդ աշխատանքի կիրառումը վնասան ե տարվել այս կամ այն ընկերոջ կողմից, այս կամ այն մարմնի կողմից, այս կամ այն քննչի կողմից: Այդպես միայն պետք ե մոտենալ հարցին: Իսկ նրանք, վորոնք ընդունակ չեն գտնվի ամենորյա, սիստեմատիկ, սև աշխատանք տանելու, նրանք գուցե պետք կգան ուրիշ տեղ, ուրիշ պայմաններում, ուրիշ գործի համար, իսկ անտեսական հարցեր լուծելու համար, սոցիալիստական շինարարությունն առաջ տանելու համար այդ մարդիկ բավականին անպետք կինեն:

թյան այդ հսկայական պոեզիան ամենավլխավոր, ամենակենտրոնագան, ամենադժվարին ու ամենապատասխանառու ֆրոնտն և սոցիալգոմ կառուցելու համար: Այդ ֆրոնտում մեր հաջողությունները բընականաբար կախված են նրանից, թե ամեն մի մարտիկ վորքան անշեղ ու զգաստ և աշխատում գործարանում, ցեխում, կոլխոզում, սովխոզում, կոռպերացիայում, դպրոցում, խճիթ-ընթերցարանում և այլն և այլն: Հարկավոր և մոբիլիզացիայի ինթերկել մեր բոլոր ուսուցչությունները: Հարկավոր և մասսաներին վոտքի հանել պայքարելու համար բրակի, պրոգույի, պրոտոյի, կորզողական տենդենցիների, անփության, անպատճանատվության, բյուրոկրատիզմի յեվ այլ չարիքների դեմ:

Հարկավոր և վճռական կերպով առաջ քաշել մասսաների միջից ընդունակ, աչքաբաց ու զասակարգայնորեն պատրաստված ընկերներին, հարկավոր և հրապարակ հանել մասսաների նոր ու նոր գնդեր՝ ներգրավելու համար նրանց «մեր մեծ աշխատանքներին»:

Մի տարի սրանից առաջ հենց այսաեղ, այս սրահում մենք խռում ենք գլխավորապես պրինցիպիալ բնույթ կրող հարցերի, հին զեկավարության սխալների, նրա աջ թեքման, աղքանական թեքման ու նրանց դեմ պայքարելու միջոցների և նոր զեկավարության անհեթքների մասին: Ճիշտ եր այդ հարկավո՞ր եր այդ: Անպայման ճիշտ եր ու հարկավոր եր: Այսոր, յերբ անցել ե մի տարի, և յերբ մեր բոլոր կազմակերպություններն անցել են կոնկրետ հարցերի, պրակտիկ աշխատանքների կապելով այդ աշխատանքները մեր կուսակցության գլխավոր գծի հետ ու հիմք ունենալով 15-րդ համագումարի, հետագա պլինումների ու 16-րդ կոնֆերանսի վորոշումները, բավական չե այսոր դուրս գալ և խոսել միայն անցյալ տարվա հարցերի շուրջը: Պահանի հարցը, վորը հնենվում եր առաջ նույն ձեվով, չի կարելի այժմ հնենել: Այսոր հենվելով դասակարգային ճիշտ գծի ու վորոշումների վրա, պետք ե աշխատել մեր գեղեցիկ ուերլյուցիաների գեղեցիկ տուգերն իրականացնել: Ընդհանուր տեսական սկզբունքաւին հարցերի շուրջը մենք ունեցանք բավականին լուրջ և բովանդակալից պայքար մեր կազմակերպության մեջ: Այդ պայքարին մասնակցել ե ամեն մի բջիջ, յեթե չասենք ամեն մի կոմմունիստ: Այդ պայքարի եյական հարցերն ըմբռնված են մեր բոլոր կազմակերպությունների կողմից:

Մեր ամբողջ կազմակերպությունը քանից հնարավորություններ և ունեցել իր գնահատականը տալու պայքարող կողմերի պատփորմալի մասին: 4-րդ պլենումը, 5-րդ պլենումը, 6-րդ համագումարը և բոլոր կազմակերպություններն ու բջիջները զատապարտել են աջ,

նացիոնալիստական թեքումը ու անցել ամենորյա սխտեմատիկ պայքարի աջ թեքման ու նրա կոնկրետ արտահայտությունների դեմ: Այսոր մեզ առավել ես հարկավոր և բեկում ընդհանուր հարցերից դեպի կոնկրետը, վոչ մի վայրէյան անտես չանելով անցյալ պայքարի քաղաքական ու սկզբունքային կողմը, ներկուսակցական պայքարի դասերը, մեր կազմակերպությունների փորձը, շարունակելով անցյալ ներկուսակցական պայքարում ունեցած հաղթանակների ու նվաճումների գիրքից հետագա ամրացումը, միշտ հաստատուն կանգնած մալով կուսակցության գլխավոր գծի գիրքերի ամրացման հիմքերի վրա:

Այդ բեկումն ընդհանուրից գետի կոնկրետը պետք ե ավելի քան իրական ու զգալի լինի: Կա՞ արդյոք այդպիսի բեկում: Այդ բեկումը տեղերում կա և բավականին զգալի լի: Մենք պետք ե աշխատենք այդ բեկումն ել ավելի ուժեղացնել: Դա չի նշանակում, վոր մենք քարոզում ենք գելաշեսավու: Վոչ, դրա գեմ մենք պայքարում ենք:

Իդեալ, յերկու խոսք գելաշեսավոյի մասին: Ի՞նչ ե իրենից ներկայացնում գելաշեսավո ասածը: Արդյոք դա ա՞յլ թեքում ե, արդյոք կարելի՞ չե հավասարության նշան դնել զելաշեսավոյի և աջ թեքման մեջ, և յեթե վոչ, ի՞նչ հարաբերության մեջ են այդ յերկու հասկացողությունները: Յեթե պարզաբանենք այդ հասկացողությունը, կարելի յետել, վոր նա անսկզբանքայնությունն ե: Մեր բոլոր աշխատանքների մեջ, լինի դա մեծ ու մշտական, թե փոքր ու ամենորյա, միենույնն ե, մենք միշտ յենում ենք պրոլետարիատի դասակարգային շահերի տեսակետից: Դա չե մեր գլխավոր ու անհրաժեշտ չափանիշը մեր բոլոր աշխատանքների ընթացքում: Յեթե այս կամ այն գործը կատարելիս մենք չենենք այդ տեսակետից, յեթե մի բառե անդամ մոռացության տանք այդ չափանիշը, մենք անպայմանորեն կընկնենք անսկզբանքայնության գիրկը: Այսքան, վորքան գելաշեսավոյն անտես և անում կուսակցության ու բանվոր դասակարգի շահերը կամ մոմենտի շահերն ավելի բարձր ե գասում, քան կուսակցության շահերը, քան դասակարգի շահերը—սնում ե վոչ կուսակցական, վոչ զասակարգային, այլ անսկզբանքային աշխատանք: Ահա վորպիսի աշխատանքը կարելի լի կոչել գելաշեսավոյ:

Որինակներ վորքան կուզեք: Վուսանք մեծ-մեծ ճառեր են ասում գյուղատնտեսության վերելքի մասին: Բերրիության բարձրացման, գյուղատնտեսության արտադրողականության մասին: Այդ բավական չե: Մենք իբր կոմմունիստական կազմակերպություն, իբր պրոլետարական կուսակցություն պիտի խոսենք ու ձգտենք այնպես առաջ

տանել գյուղատնակնության վերելքը, այնպես բարձրացնել բերքատը-  
վությունը, այնպես զարգացնել գյուղատնտեսության՝ արտադրողակա-  
նությունը, վորապեսզի մեր ձեռք առած բոլոր միջոցները դուրին  
դարձնեն, ոժանդակեն ու կարիկի դարձնեն մասն ու մանրա-  
գույն անհատական տնտեսությունների միացումն ու փոխանցումը  
կոլեկտիվ սոցիալիստական տնտեսության։ Ենք այս վերջին հանգա-  
մանքը խոշոր, առանձնահատում վճռական նշանակություն ունի մեր  
կուսակցական, դաստկարգային գծի տեսակետից, ու մեր սկզբունքա-  
յին գիրքը ի հետևողական զարգացման ու ամրացման համար։ Առանց  
այդ վերջին հանգամանքի մեր աշխատանքը վոչ այլ ինչ է, յեթե վոչ  
անսկզբունքային, հետեւապես դելլաչինստվու։ Մի ուրիշ որինակ։  
Մեր առաջ դրված ե գյուղատնտեսության ռեկոնստրուկցիայի պրոր-  
լեմը։ Նույն խնդիրը կարող եր գլուխ լինել կապիտալիստական յեր-  
կըրներում ապրող մասնավոր ֆերմերի առաջ։ Կամ արդյոք տարբերու-  
թյուն այն միջոցների մեջ, վոր ձեռնարկում են առաջին և յերկ-  
րորդ գեպքում մեզ մոտ և կապիտալիստական յերկըներում։ Անպայ-  
ման կա, և մեծ տարբերություն։ Մենք գյուղատնտեսության ռեկոն-  
ստրուկցիայի ասպարիզում առաջնորդվում ենք դաստկարգային-պրո-  
լետարական սկզբունքով, իսկ նրանք՝ մասնավոր սեփականատիրական-  
կապիտալիստական սկզբունքներով։ Մենք այդ հարցին մոտենում  
ենք այսպես, վոր մեր բոլոր ձեռնարկումներն ու միջոցները պիտի  
յենան պրոլետարական դաստկարգային սկզբունքից—գյուղատնտե-  
սությունը ռեկոնստրուկցիայի յենթարկել այնպես, վոր նա հասցնի,  
սոցիալիստական տնտեսության, սոցիալիստական սեկտորի զարգաց-  
ման ու ամրացման, ու վերջին հաշվով հաղթանակի։ Ամեն դեպքում,  
յերբ մենք մոռացության տանք մեր պրոլետարական-դաստկարգա-  
յին սկզբունքային տեսակետը, վորը հիմք պիտի կազմի մեր բոլոր  
աշխատանքների, կամ մոռացության տանք մեր դաստկարգային հե-  
ռանկարները—սոցիալիզմի հաղթանակը—մենք անպայման սայթա-  
քում ենք դաստկարգային կուսակցական ուղիղ գծից, ընկնում ան-  
սկզբունքայնության մեջ—դելլաչինստվուի մեջ։ Արդյոք կարելի՞ յե-  
հավասարության նշան դնել դելլաչինստվուի և աջ թեքման մեջ, վոչ,  
ինարկե, Դելլաչինստվուն անսկզբունքայնություն ե։ Աջ թեքումը՝ դա-  
այն սկզբունքն է, այն տեսական մտածելակերպն է, վորն առում ե,  
թե մենք շատ ենք տարված սոցիալիստական շինարարությամբ, իրը  
հարկավոր ե խնդրութիւնը ամրացման թափը դանդաղեցնել, իրը հարկավոր  
ե ծանրության կենտրոնը տեղափոխել գյուղատնտեսության, գլխավո-  
րապես անհատական տնտեսության վրա և այլն և այլն։

Институт  
БЕЗОПАСНОСТИ  
Академии Наук ССР

Աջ թեքումը մանր-բուրժուական սպառագաղթը ե. Աջ թեքման  
թերիան ծնվում ու զարգանում ե մեր յերկի դաստկարգերի փոխհարա-  
բերության ոխականի հետևանքով։ Նա հետևանք և պրոլե-  
տարիատի դաստկարգային ուժերի թերագնահատության։ Աջ թեք-  
ման ներկայացուցիչների ամենամեծ սխալը նրանումն ե, վոր նրանք  
սխալ են գնահատում մեր հեղափոխության շարժիչ ուժերը։ Սրա վրա  
ավելացրեք և զիջումների թերիան, կոլխոզների ու սովխոզների  
զարգացման դանդաղեցումը, գյուղատնտեսության դեղադաշտիան,  
զանգան աղատությունները մասնավորի համար և այլն և այլն, ու  
կտեսնենք, վոր այս բոլորը դելլաչինստվու։ Այստեղ կա անսկզբուն-  
քայնություն ևս, բայց սա շատ ու շատ ավելի լին, քան միայն անըս-  
կըզբունքայնությունը։

Դելլաչինստվուն-դա աջ թեքման արտահայտություններից մեկն  
ե, բայց վոչ աջ թեքում, վորովհետեւ աջ թեքման ամրող գիծը,  
ծրագիրը, պլատֆորմը, իդելոգիան չի ծածկվում դելլաչինստվու հաս-  
կացողությամբ։ Ասել, վոր աջ թեքումը նույնն ե, ինչ վոր դելլա-  
չինստվուն կամ ընդհակառակը, այսինքն հավասարության նշան դնել  
այդ յերկու հասկացողությունների մեջ, դա կնշանակե՝ վոչ միայն  
շըմբանել աջ թեքման իդելոգիական յյությունը, այլ և քողարկել աջ  
թեքումը, այլ և աջ թեքման՝ այդ գլխավոր վտանգի դեմ տարվող պայքարը  
փոխել դելլաչինստվուի դեմ տարվող պայքարի, ուրիշ խոսքով՝ կու-  
սակցության ու պրոլետարիատի ուշադրությունը աջ թեքումից—այդ  
գլխավոր վտանգից դարձնել դելլաչինստվուն, վոր նույնպես վր-  
տանգ ե, բայց աջ թեքման մի տեսակն ե, մի ձեռն և ներկա շրջանում,  
մի ձեռ, վորով այսոր քողարկում ե իրեն աջ թեքումը կոնկրետ աշ-  
խատանքների ընթացքում, այսինքն ուշադրությունը ամրողվից, գը-  
խավորից, ընդհանուրից, հիմնականից դարձնում ե դեպի մասնակորը,  
մի տեսակը, մի ձեռը...

Ահա թե ինչու կուսակցությունը աջ թեքման դեմ պայքարելու  
անհամեշտ պայման ե համարում, անհաշտ իդելոգիական պայքար  
տանելու աշխատանքների հետ միասին, պայքարել նաև նրա կոն-  
կրետ արտահայտությունների դեմ գործնական աշխատանքների ըն-  
թացքում, միաժամանակ և դելլաչինստվուի դեմ, իրը աջ թեքման ար-  
տահայտության ձեռներից, տեսակներից մեկի դեմ։

Դելլաչինստվուի սոցիալական արմատները չափագանց առաջ են,  
նրա սոցալական արմատները միննուն ժամանակ և աջ թեքման սո-  
ցալական արմատներն են։

Սխալ ե աջ թեքումը շատ ուղղական գլխավությունը վտանգների հետ, — լինի  
ՀԽՍՀ-Արմ. ՀՀ  
Հ. Մ. Ա. ՄԱԾՆԱԿԻԱՅԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

գա բյուրոկրատիզմ, լինչըքա վոչ կոմմունիստական վորեն մի քայլ կամ վորեն արատ: Աջ թեքումը չի կարելի նույնպես սեղմել, նեղ հասկանալ և վերածել այն դելյաչեստվորի: այդ կնշանակի քողարքել աջ թեքումը: Միաժամանակ աջ թեքումը չի կարելի հավասարեցնել ու շփոթել աղքայնական թեքման, ուկոնիզմի հետ: Վ. քրան ել յերեմի աջ թեքումն արտահայտվի աղքայնական թեքմամբ, այնուամենայնիվ նրանք հավասար հասկացողություններ չեն; և աղքայնական թեքումը, վոր աջ թեքման մի տեսակն ու ձեն ե, չի կարելի նույնացնել աջ թեքման հետ: Դա սխալ կլիներ, դա կթուլացներ պայքարը իսկական գլխավոր վտանգի դեմ, աջ թեքման դեմ, դա դեղորիենտացիայի կենթարկեր մեր կազմակերպությունները, դա կըողորկեր աջ թեքման դեմ տանելիք պայքարը:

Գլխավոր խնդիրն ե՝ միրկացնել աջ թեքման գաղափարական եւությունը—հաշտվողականության գաղափարական եյությունը: Գըլխավոր խնդիրն ե՝ հրահել մասսաների ակտիվ պայքարը աջթեքման ու հաշտվողականության, նրանց կոնկրետ արտահայտությունների դեմ, հետևապես դելյաչեստվորի դեմ: Զգետք ե մոռանալ, վոր մենք պայքարելով դելյաչեստվորի դեմ, յերբեք դեմ չպիտի լինենք կոնկրետ աշխատանքների, վորոնք ամրացնում են պրոլետարական դիկտատուրան: Ընդհակառակությունը, մենք հենց այդ հեղափոխական գործնականության մասին ենք խոսում, մենք անսկզբունքայնական դելյաչեստվոյին հակադրում ենք բազմակողմանի մարքսիստական-լինինքան փորձը, մեր սոցիալիստական շինարարության կոնկրետ հեղափոխական դրդնականությունը:

Ուշադրություն դարձեք մեր կուսակցական դեկավար մարմինների աշխատանքների վրա: 4-րդ պլենումը գլխավորապես քննեց սկզբունքային հարցեր. 5-րդ պլենումի առանցքն իդեոլոգիական հարցն եր: Կուսակցական 6-րդ համագումարը հանրագումարի յև բերում կուսակցության տարած բոլոր աշխատանքներն ու տալով հետագա անելիքների ծրագրը՝ շեշտը դնում ե այդ վորոշումների գործնական իրականացման անհաժեշտության վրա: Մենք համոզված ենք, վոր յեթե վաղը վորելից մեկը հին հարցերը նորից բարձրացնի, հին սխալները կրկնի ու կ. կ. լենինյան ուղիղ գծի դեմ դավեր սարքի, մեր բոլոր կազմակերպությունները դրանց կտան արժանի պատառ իւան (ծափահարություն): Դրանում վոչ մի կասկած չկա, բայց վոր մեր ակտիվը լավ կովել զիտե թեքումների դեմ, դա անկասկած ե, բայց վոր նա զիտե նույնպես սխատմատիկ սև աշխատանք տանել Խորհրդային յերկրի ամեն մի անկյունում, վորպեսզի իրականացվի

ուղիղ գիծը և պլանը, այդ դեռ հարյուր տոկոսով ապացուցված չե, այդ պետք ե ապացուցել:

Կան մարդիկ, վորոնք կարծում են, վոր անդադար պետք ե կովել ու ներկուսակցական պայքարը նպատակ են դարձնում իրենց համար: Կան մարդիկ, վորոնք առհասարակ իրենց տեմպերամենտի պատճառով այնպիսին են, վոր չեն կարող հանդիսաւ նստեր, այլ պիտի միշտ կովեն, յեթե նույնիսկ կովի առիթ չլինի. իսկ յեթե մարդ չլինի կովելու համար՝ իրենք իրենց դեմ կովեն: Մեր կուսակցությանը այդպիսի գոնքիշությունը վայել չե: Կուսակցությունը պետք ե խմանա, թե յերբ պիտի նա ներկուսակցական պայքար մղի, յերբ պետք ե պայքարի ինքնարժեքն իջեցնելու համար, յերբ պետք ե առաջ քաշի արտադրողական խնդիրները և այն և ալլն: Չե վոր այդ բոլորը պայքար ե, պայքարի զանազան ձևեր: Վոմանք ուզում են պայքարել ըստ յերեւթին, պայքարել պայքարելու համար, քրանտայրություն են անում, իսկ մենք զիտենք, վոր ամեն մի պրոլետարական գասակարգային շահերից բղուող խնդիր հաջող լուծելու համար մենք պայքար ենք տանում, մենք կատարում ենք մեր պատմական մեծ նպատակի մի մասնիկը, հնգամյա պլանի իրագործումը, վորն ամենամեծ պայքարն ե այս մոմենտին, ինենարժենի իջեցումն ամենազրի խավոր պայքարներից մեկն ե յեվ այլն յեվ այլն:

Դրա համար ել մենք ասում ենք, վոր ամեն մի կոնկրետ աշխատանք կապված ե պրինցիպիալ հարցերի հետ: առանձնացնելի կարելի այդ յերկու բանը: Ամեն մի պայքար չի կարելի պրիմիտիվ կերպով հասկանալ, ինչպես վոմանք կատակով ասում են, թե այս պիենումը հետաքրքիր չե, կովի չկա: Այդպիսի ընկերների համար մենք հետաքրքրություն չենք կարող ստեղծել թող այդ հետաքրքրությունն ուրիշ տեղ վորումներ: Գեղեցիկ ուղղուցցիաներով սոցիալիզմ չի կարելի կառուցել: Աւշուշտ, առանց ճիշտ ու լենինյան ուղղուցցիաների նույնպիս չի կարելի սոցիալիզմ կառուցել, բայց միմիան գեղեցիկ ուղղուցցիաներով սոցիալիզմ նույնպիս չի կարելի կառուցել: Սոցիալիզմի կառուցման համար անհրաժեշտ քաղաքական ուղիղ ուղղուցցիաների առանձին կետերը կիրառել կանքում: Այդ ե իսկական սոցիալիստական շինարարությունը: Այդ տեսակետից պետք ե սոտենալ հարցին:

Ներկա շրջանում հատկապես ամենակարևորն այն ե, վոր ամեն մի կոմմունիստ, ամեն մի կոմիտետ, ամեն մի կին պատգամավորուէի լավ քննի հետեւալ խնդիրը, թե արդիաք նա կատարել ե իր վրա դրված բոլոր պարտականությունները սոցիալիստական շինարարու-

թիան համար, թե արդյոք այն կազմակերպությունը, վորի ակտիվ անդամ և նա իրեն համարում, սպառել և բոլոր հնարավորությունները քաղաքում թե գյուղում ավելի մեծ նվաճումներ անելու սոցիալիստական շինարարության համար: Դուք գիտե՞ք արդյոք, վոր մեր շարքերում դեռ առողջապահ ապրում են այնպիսիները, վորոնք ազնվական ու տղորուկային վերաբերժունք ունեն գեղի աշխատանքը:

Կենտկոմի հաշվետու նյութերի մեջ պատահեցիք մի այնպիսի հրեշտակության, յերբ կոմմունիստական կուսակցության անդամ կոչված մարդն իրեն թույլ և տալիս լվտիաբար ասելուանկուսակցական բանվորներին, վոր ինքը, իրը կոմմունիստ, պիտի ղեկավարի և ուտի, իսկ անկուսակցականներն աշխատեն:

Յեզ յերևակացեցիք այդ մարդը գեռևս կուսակցության շարքերում և—մի ավելորդ ապացույց կուսակցական շարքերը մաքրելու այնպիսի կատեգորիայի ընկերներ, վորոնք 5-ամյակի պանի կամ մեր տնտեսական հարցերի վրա նախում են ալսպես, թե՝ կարողանան կատարել՝ լավ, մի կերպ կկատարեն, չեն կարողանա՛ մեր ուսւ քերին մեղ ամեն ինչ կտա:

Այդ ընկերներին, այդպես մտածողներին պետք և պատասխանել, վոր «Խուսաստանի հարուստ քեռին» միշտ ել պարտավոր և ոգնել և ու ելի կողնի հետամիաց անսեսություն ունեցող սովորական ծայրագալառներին, վորոնց թվում և Խորհրդային Հայաստանին, բայց պետք և զլիսից հանել այն միտքը, թե միայն բյուջենությունից պետք և ազատվել վերջիվերջու Զի կարելի բյուջեյիվ, չի կարելի դուստր սոցիալիզմ կառուցել՝ այդ տեսակեալը վոչ մի առնչություն չունի վոչ լենինիզմի, վոչ մարքսիզմի հետ բայց այդպիսի մարդիկ կան, վորոնք գլխավոր շեշտը դնում են այնտեղից ստանալու վարդականը, բայց այդպիսի մասին, նրանց ձևակերպությունը կամ մասնակի մասին: Նատ հաճախ խոսվում և այն մասին, վոր բանվորական վորակալ ուժի մեծ պակասություն ունենք, բայց մի բանի վրա կանգ չեն առնում մեր կուսակցական որդանները, վորոնք աշխատում են այդ վայրերում. իրենց համար լուրջ ուսումնասիրության նյութ չին դարձնում բանվորական կադրերի հարցը:

Այդ տեղերում այսպես կոչված՝ ձևավորված բանվոր դասակարդ չունենք, այլ ունենք գյուղից յեկած բանվորական նոր խավեր, վորոնք ձևավորվում են, և վորոնց ձևավորման համար հարկավոր և վոչ թե մեկ-յերկու տարվա աշխատանք, այլ շատ ու շատ յերկար ժամանակ: Հարկավոր ե կոնկրետ կերպով դնել այդ հարցը. հարկավոր և կոնկրետ կերպով դնել հարցն այն ձեռքի մասին, վորոնք հարկավոր են մեր կուսակցական և պրոֆեսիոնալ որգանների համար՝ այդ նոր խավերի մեջ աշխատելու համար. Կարծում եմ, վոր հասկանալի յե այն հանգամանքը, վոր ուրիշ բան և աշխատել ձևավորված պրոլետարիատի մեջ, վորն ունի իր անցյալը, իր տրագիցիան, ինչպեսորինակ, Բագմե-

նիվ մեր յերկրում արդյունաբերությունը չափազանց թույլ և զարգացած. դա ակսիոմա է: Դա բացարկում և ցարական կառավարության գաղաքականությամբ ու իմակերիալիզմի հավատարիմ գամփոի՛ գաշնակների տարած ավելի քաղաքականության շնորհիվ. Միայն խորհրդային իշխանության որով և, վոր սկսում ե արդյունաբերությունը զարգանալ մեզ մոտ:

Մեր յերկրի արդյունաբերության տեսակարար կիուլ շատ ավելի ցածր ե, քան Միության մեջ: Հենց այդ հանգամանքը—մեծ հստագորությունները մի կողմից, արդյունաբերության թույլ զարգացած լինելը միուս կողմից,— պայմանագործում և խորհրդային կարգերում մեր յերկրի արդյունաբերության նկատելի թափն ու նրա ուրույն բնութագիրը: Այստեղ ավելի քան մի վորեւ շրջանում նկատվում ե, վոր վերականգնման պլոցեսսը շատ սերտ կերպով կապված է վերակառւցման պրոցեսսի հետ: Հիմնական շինարարության ու ներդրումների մեջ ահագին դեր ունի վոչ միայն նոր ձեռնարկությունների կառուցումը, այլ և, վոր չափազանց կարեորագույն նշանակություն ունի, բանվոր դասակարգի ձևակերպումը, վորակյալ բանվորների կադրերի ստեղծումը և այդ նոր խավերի մեջ աշխատանք տանելու ձեռքի ու լեղանակների հարցը: Սրանից յերեսում ե, վոր մենք ել տվելի պետք և ուշագրություն դարձնենք պղնձի դարգացման, ուժեղացնենք նրանց թափը և ել ավելի պետք և մտածենք բանվորական կադրերի մասին, նրանց ձևակերպման ու նրանց մեջ աշխատելու նոր ձեռքի մասին: Նատ հաճախ խոսվում և այն մասին, վոր բանվորական վորակալ ուժի մեծ պակասություն ունենք, բայց մի բանի վրա կանգ չեն առնում մեր կուսակցական որդանները, վորոնք աշխատում են այդ վայրերում. իրենց համար լուրջ ուսումնասիրության նյութ չին դարձնում բանվորական կադրերի հարցը:

Այդ տեղերում այսպես կոչված՝ ձևավորված բանվոր դասակարդ չունենք, այլ ունենք գյուղից յեկած բանվորական նոր խավեր, վորոնք ձևավորվում են, և վորոնց ձևավորման համար հարկավոր և վոչ թե մեկ-յերկու տարվա աշխատանք, այլ շատ ու շատ յերկար ժամանակ: Հարկավոր ե կոնկրետ կերպով դնել այդ հարցը. հարկավոր և կոնկրետ կերպով դնել հարցն այն ձեռքի մասին, վորոնք հարկավոր են մեր կուսակցական և պրոֆեսիոնալ որգանների համար՝ այդ նոր խավերի մեջ աշխատելու համար. Կարծում եմ, վոր հասկանալի յե այն հանգամանքը, վոր ուրիշ բան և աշխատել ձևավորված պրոլետարիատի մեջ, վորն ունի իր անցյալը, իր տրագիցիան, ինչպեսորինակ, Բագմե-

և կենինգրադի պրոլետարիատը, և ուրիշ բան և աշխատել նոր ձևավորվող պրոլետարիատի մեջ, վոր մենք ունենք պղնձի ու պեմզայի հանքերում։ Այդ հարցը, վորքան հայտնի յե, չի քննել վոչ Ալլահվերդու ռայկոմը, վոչ ել Դափանի ռայկոմը, բայց այդ հարցը չափանց կարևոր ե։

Այժմ պարզ պետք ել լինի, վոր Ալլահվերդու լեռնային հանքերի այն դրության մեջ, վորն ունեցինք անցյալ տարի ԲԳԾ և ԺԾԽ կոմիսարյի ուսումնասիրությունից հետո, վորի մասին այն ժամանակ խոսում եյինք, և այն դրությունը, վորն այսոր կա, գոյություն ունի, մեծ տարբերություն կա։ Այդ պետք ել վերագրել հենց անցյալ տարվա կենտկոմի, ԲԳԾ և ԺԾԽ ուսումնասիրության արդյունքներին ու մեր տարած աշխատանքներին և, ինչպես տեսանք, վոչ մի հոետոր, վորը գալիս ել այստեղ խոսելու, չկարողացավ ժխտել այն նվաճումները, վոր մենք արդեն ունենք այդ ասպարիզում։

Շատ լավ բան ինքնաքննադատությամբ զբաղվել արդյոք կարելի՞ յե մազաշափ անդամ քիչ ծավալել կամ սեղմել ինքնաքննադատությունը. վոչ յերեք յերեք, չի կարելի սեղմել ինքնաքննադատությունը, բայց արդյոք վտանգավոր չե՞ն, յերբ վոմանք այդ ինքնաքննադատության ուղղությունն ուղղում են փոխել արդյոք վտանգավոր չե, յերբ մեծ դժվարություններից հետո նվաճումներ ունենալով՝ մենք այդ նվաճումներն անտես ենք առնում. դա վտանգավոր ե, և կարելի յե ընկնել այնպիսի պիստիզմի մեջ, վոր վոչ մի սոցիալիզմի մասին խոսք լինել չի կարող։ Միենույն ժամանակ բացերը պետք ել անինա յերեան հանել, ինքնաքննադատությունն ավելի ծավալել։

Այդ մասին խոսելիս մի հարցի վրա պիտի ուշադրություն դարձրենել. յերբ մենք անցյալ տարի այստեղ չափազանց խիստ ինքնաքննադատության կրակի տակ գրինք Ալլահվերդու խայտառակությունները՝ մի ամբողջ կիսամյակի նորութ տվինք դաշնակցական թերթերին. յեթե հրշում եք, վոմանք նույնիսկ խոսում ելին, թե արդյոք մենք սահմանը չանցանք. դաշնակցականներն արտասահմանում գրում եյին, թե կոստանդնավայր այս-ինչն ասեց, Խանջյանը այս-ինչն ասեց, Տեր-Գաբրիելյանը այն ասեց, ամեն որ նրանք իրենց հոդվածներում գրում ելին այդ մասին։ Հիշում եմ նույնիսկ կե-ի նախագահության նիստին այսպիսի խոսակցություն յեղավ, թե արդյոք մենք ինքնաքննադատության ծավալման սահմանը չանցանք, բայց, ինարկե, մենք հանդսացրինք վոմանց ու վորոշեցինք, վոր ինքնաքննադատությունը ել ավելի պիտի ծավալել։ Ու այդ վորոշումը շատ ճիշտ եր։

Իսկ ինչ վերաբերում ել դաշնակներին, նրանք վորպես մեր դասակար-

գային հակառակորդներ պիտի անպայման բամբասեն, վատաբանեն ու կոկուն մեր ամեն մի հաջողության ղեպքում։ Դատապարտված դասակարգի, դատապարտված կուսակցության անձար «կորյուններն» ու իմպերիալիզմի հլու-հպատակ ու ծախութանաք մրոտողներն ուրիշ բանի պետք չեն աւսոր, քան սպիտակ-զգարդիական հավաքուէթներում ու արտասահմանան հետայն չայշչիխանաներում պառավ կանանց նման կախարդություններ անեն ջրի վրա գուշակելու համար Խորհրդային Հայաստանի հերթական անհաջողություններից ու հերթական տապալման նշանների մասին։ Թող նրանք զբաղվեն այդ խղով, իսկ մենք գործի մասին կմտածենք ու գործի հաջողության համար ել ավելի կծավալենք ինքնաքննադատությունը։ Վերջապես, մեղ համար քանի գրոշի արդեք ունեն դաշնակների բարբաջանքները. միթե նրանք կարող են մեզ գովել միթե կարող են մեր տեսակետից մոտենալ հարցերին. չեն կարող, վորովհետև նրանք մեր դասակարգային հակառակորդներն են։ Մենք չենք վախենում այդ բամբասանքներից ու այդպիսի հականեղափական քննադատությունից. մենք չենք կարող մազաշափ անդամ սեղմացնել ինքնաքննադատությունը, վորովհետև ինքնաքննադատությունը հենց պրոլետարական կուսակցության յիշ գլխավոր հատկանին ե, վոր պետք ել ոժանդակի մեր նվաճումներին, մեր հաջող զարգացմանը։ Հիմա ինքնաքննադատության հիման վրա մենք արդեն ունենք հազին նվաճումներ։

Ընկերներ, մենք պետք ել ասենք, վոր նվաճումներ գոյություն ունեն, և այդ նվաճումների գոյությունը և արդյունքը մեղ պետք ել թելաղբեկին ել ավելի ծավալել ինքնաքննադատությունը։ Կային մարդիկ, վորոնք կարծում եյին, վոր ինքնաքննադատության իջեցնում և մեր աշխատանքի հաջողությունը, վոր ինքնաքննադատությունը արտադրողականության թափն իջեցնում ե, վոր ինքնաքննադատությունը վնաս ե. այդպիսի մարդիկ կալին, բայց այսոր նրանք չեն յերևում։ Այժմ այդպիսի մարդիկ յեթե կան, մուզեյ պետք ել ուղարկել։ Յես չեմ խոսում նվաճումների մասին, վորովհետև ընկ. Զեկասինն իր զեկուցման մեջ այդ մասին ասաց. յես չեմ խոսի նվաճումների մասին, վորովհետև այստեղ ընկեր Տ.-Գաբրիելյանը և ուրիշները խոսեցին այդ մասին, բայց միաժամանակ պետք էլ առաջ գետես իրագործված չե։

Այդպիսի բան չի յել կարող լինել, վորովհետև 4-րդ պիենումը (անցյալ տարի) ահազին խնդիրներ երեկ մեր առաջ, վոր մի տարվա գործ չե։

Զպետք ել այնքան նայիվ լինել և հավատար վոր ինչ վոր այս

պլենումին վորոշեցինք, հետեւալ պլենումին բոլորը լուծված լինի. Յեթե սխալներն ուղղվել են, դա արդեն լավ է: Դեռևս չափա- զանց մեծ բացեր գոյություն ունեն, բացեր, վորոնք չեն ուղղված, բայց ընդհանուր առմամբ մենք ահագին նվաճումներ ունենք:

Տնտեսական զարգացման ներկա շրջանում ամենախոշոր կենտրոնական հարցերից մեկը ինքնարժեքի իջեցման հարցն ե. ուրիշ խոսքով՝ ինքնարժեքի իջեցման հարցը մեծ չափով կազմում է սոցիա- լիզմի կառուցման այսորվա ետապի գլխավոր հարցերից մեկը: Ինք- նարժեքի հարցին մոտինալիս մենք պետք ե ի նկատի ունենանք յերկու համեմատական հանգամանք:

Մենք թեակոխել ենք արդյունաբերության ասպարիզում խոշոր շինարարական աշխատանքների, բայց մենք խիստ սահմանափակ նյութական միջոցներ ունենք այդ շինարարության համար: Մեր մի- ջոցներից ամենազլիսավորը ներքին (արդյունաբերության) կուտա- կումներն են: Մինչդեռ այն քաղաքականությունը, վոր մենք տանում ենք ապրանքների գների վերաբերյալ, թելադրում ե, վորպեսզի մեր արդյունաբերության ներքին կուտակումները սահմանափակվեն ինք- նարժեքի իջեցման մակարդակով: Ինքնարժեքի փոփոխություններով ե պայմանագործում մեր ներքին կուտակումների չափի փոփոխումը: Գների իջեցումն իրագործելի յե միայն բաց թողնման գների իջեց- ման դեպում, իսկ բաց թողնման գները կարելի յե իջեցնել միայն համապատասխան կերպով իջեցնելով ինքնարժեքը:

Արդյունաբերության ներկա չափի համար ինքնարժեքի մեկ տո- կոսը բարձրացում կամ իջեցում ե տալիս վոչ պակաս, քան 100 միլիոն ավելի կամ պակաս ներքին կուտակում արդյունաբերության մեջ: Դա ահագին գումար ե, յեթե ինկատի ունենանք, վոր այնպիսի հսկա, վորպիսին Դնեպրոստրոյն ե, պահանջում ե 150—200 միլիոն տուրլի: Հետեւապես մեկ և կես կամ 2 տոկոսով իջեցնել ինքնարժեքը, կնշանակի՝ ունենալ այնքան լրացուցիչ ներքին կուտակում, վոր կա- րելի յե մի Դնեպրոստրոյ ևս կառուցել: Մյուս կողմից պիտի ի նկա- տի ունենալ, վոր այն գները, վոր այժմ գոյություն ունեն մեր ար- դյունաբերության մեջ, շատ բարձր են: Մենք մի կողմից պիտի աշ- խատենք վերացնել այն տարբերությունը, «մկրատ»-ը, վոր գոյու- թյուն ունի մեր գների ու համաշխարհակին գների միջև՝ աշխատելով հետևետե մոտենալ համաշխարհային գներին, թյուս կողմից վերաց- նենք այն տարբերությունը, «մկրատ»-ը, վոր գոյություն ունի ար- դյունաբերական ապրանքների գների ու գլուղատնասության մթերք- ների գների միջև՝ աշխատելով պահպանել ու ամրացնել բանվոր դա-

սակարգի ու գլուղացիության սմիջկան: Այս բոլորը գալիս ե ա- սելու, վոր մենք հետզհետե ել ավելի պիտի իջեցնենք արդյունաբե- րական ապրանքների գները, հետեւապես ինքնարժեքը: Մինչդեռ յեթե գների իջեցմանը չհամապատասխանի ինքնարժեքի ել ավելի իջե- ցումը, բացասաբար այդ կազդի արդյունաբերության ներքին կուտա- կումների գումարի վրա, այսինքն ամենագիտավոր աղբյուրի վրա, վոր առաջնակարգ դեր ե խաղում մեր սոցիա լիստական շինարարության համար:

Ինքնարժեքի իջեցման խնդիրը կախված ե մեր արդյունաբե- րության աշխատանքների վորակից: Նա պահանջում է արտադրողա- կան ապարատի բոլոր մասնիկների աննկուն ու համառ աշխա- տանք, արտադրողական պրոցեսների ու մեքենաների ոգտագործման ռացիոնալիզացիա, հում նյութերի ու վառելանյութի ռացիոնալ ու խնացողական ոգտագործում, աշխատանքի ավելի բարձր վորակի կազ- մակերպում, վերակազմակերպման ու վերակառուցման աշխատանքնե- րի ավելի բարձր հիմքեր:

Ինքնարժեքի իջեցման կենտրոնական նշանակությունն ավելի պարզ յերեան ե գալիս հնգամյակի միջեց: 1927—28 թ. մինչև 1932—33 թ., այսինքն հնգամյակի ընթացքում մենք պիտի ներդնենք արդյուն- աբերության մեջ ավելի քան 20 միլիարդ: Վերտեղից ե վերցվում այդ գումարը: Հնգամյակի ընթացքում արդյունաբերության մեջ ներդնելու, ամբողջ անհրաժեշտ գումարի 70 տոկոսը ծածկվում է ար- դյունաբերության միջոցներով 50-տոկ. ոգուտներով:

Օ-տոկոսը կազմում է ներքին կուտակումը. սա ի՞նչ ե ասում. սա գալիս ե ասելու, վոր ներքին կուտակում յեթե չինի, չի կարող լինել սոցիալիստական շինարարություն, չի լինի ինդուստրիալիզա- ցիան: Ապա ուրեմն՝ կնշանակի՝ ինքնարժեքն ավելի պիտք ե իջեց- նել, քան թե գները, վորպեսզի տարբերությունը կազմի ներքին կու- տակումը: Վոչ միայն ամբողջ 5-ամյակի ընթացքում, այլև 5-ամյակի առաջին տարին՝ 28—29 թ. ինքնարժեքի մի տոկոս իջեցումը տալիս ե արդյունաբերությանը 120—130 միլիոն, իսկ 5-ամյակի վերջը՝ մո- տավորապես 300 միլիոն, իջեցման ամեն մի տոկոսը տալիս ե 5-ա- մյակի վերջում 290—300 միլիոն ուրեմնի կուտակում: Իսկ այս տարի՝ մոտավորապես 130 միլիոն ուրեմնի սուբյեկտի խոսքով՝ յեթե 2-տոկոս ինքնարժեքն իջեցնենք՝ մենք կկարողանանք կառուցել Դնեպրոստրոյ՝ Հնգամյակի միջև ինքնարժեքի ընդհանուր իջեցումը կազմում ե 35 տոկոս, այսինչ բաց թողնման գների իջեցումը՝ 23,9 տոկոս: Այս տեսակետից ինքնարժեքի իջեցման խնդիրը գառնում է կենտրոնա-

Կան հարց, դառնում ե մի հարց. վորը կարող ե առաջ շարժել սոցիալիստական շինարարությունը կամ թե դադարեցնել: Ինքնարժեքի իշխացման խնդիրը՝ սոցիալիստական շինարարության խնդիրն ե, առանց ինքնարժեքի իշխացման չի կարող խոսք լինել սոցիալիզմի մասին: Այդպիսի ոեալ, այդպիսի կենտրոնական նշանակություն ունի այդ հարցը, և այդտեղ կուսակցական որգանները և մանավանդ պրոֆեսսիոնալ որգանները մեծ անելիքներ ունեն: Ինքնարժեքի իշխացման հարցում ամբողջ ճամփակի ընթացքում պահանջվում է մեզանից, վորպեսզի մենք հասկանալի դարձնենք այդ հարցն ամեն մի բանվորի, վորն աշխատում ե գործարանում, և ամեն մի ազնիվ քաղաքացու, վորն աշխատում ե մեր ձեռնարկում, ամեն մի ինժեների և տան մի տեխնիկի, վորպեսզի նա այդ հեռանկարը չկորցնի, վորպեսզի նա իր ամենորյա աշխատանքների ժամանակ վոչ մի վայրկյան չմոռանա, վոր ինքնարժեքի իշխացման մեկ տոկոսը տալիս ե Դնեպրոստրու:

Հնկերներ, ընկ. Զեկասինն ասում ե, վոր մոտավորապես 5 տո-  
կոսով իշեցված ե ինքնարժեքը լեռնահանքերում: Խնձ թվում ե, վոր  
յեթե այդ 5 %ը չմնի և քիչ ել պակաս լինի՝ դա բավականին մեծ  
գործ ե, վորովիճակը ընդհանուր տոկոսը Խորհրդային Միության մեջ  
2 և կես ե միջին հաշվով, թեև կան ձեռնարկություններ, վորտեղ ինք-  
նարժեքի իշեցումը 10 տոկոս ե: Կուսակցության դիրքեկտիվը այս տա-  
րի ինկատի ունի 6-7 տոկ., ծանր արդյունաբերության մեջ 7 և կես  
տոկ., թեթև արդյունաբերության մոտավորապես 7 տոկ. պետք ե ի-  
շեցնել, այսինչ այս տարվա 1-ին կիսամյակը տալիս ե 2 և կես տոկ.,  
Յերկու և կես տոկոսը չափազանց քիչ ե, դրա համար կուսակցության  
առաջ դրվում ե լուրջ կերպով այն խնդիրը, վոր յերկրորդ կիսամյա-  
կում ավելի քան 6 տոկ. պետք ե իջեցնենք, վորպեսզի դիրքեկտիվը  
կատարած լինենք:

Մեզ մոտ յեթի յերկուս և կեսին համապատասխանում ե 5 տոկոսը, դա վատ չի, բայց միաժամանակ պետք ե ասել վոր դա բոլորովին բավական չե: Անհրաժեշտ ե յերկրորդ կիսամյակում ինքնարժեքը աղելի իշեցնել:

Զի կարելի դուրս գալ և ասել՝ տվեք հա տվեք։ Մեր բազան  
պետք ե լինեն ներքին կուտակումները, մասսաների ցեռանդը  
և ոգնությունը, մասսաների ներզրավումը սոցիալիստական շինարար-  
ության մեջ։ Կենտրոնից մենք ոգնություն ստանում ենք, բայց չենք  
կարող ասել, վոր ամեն բան այնտեղից պետք են գա։

Այս մի տնտեսավար գիտե, և սա գաղտնիք չե, վոր յերբեմն կարելի յե զարմանալ, թե վորպիսի ձևական, բյուրոկրատական, ցի-

Նովինիկական կերպով են մտտենում վումանք լայն մասսաների ներգրավման հարցին. շատերը զիտեն, թե ինչպես մենք չափազանց քիչ ենք անում, վորպեսզի մասսաները ներգրավենք, թե ինչպես այդ հարցին մտտենում ենք շատ անգամ բայուրուկրատիկ կերպով. իսկ յեթե ավելացնենք այն հոգեբանությունը, թե տվեք ավել, իսկ ինքնարժեքը կամ կբարձրանա կամ ցածր կլինի, այդ մեր գործը չե, այն ժամանակ սոցիալիստական շինարարության մասին խոսք անգամ լինել չե կարող: Ինչու չե կատարված կուսակցության դերեկտիվը ինքնարժեքի իջեցման համար: Ընկ. Ռուխիմովիչը, համամիութենական ժողոտականի գրություն-անալիզականը, իր բացատրական գմբեցման մեջ .ասում է հետեւյալը. «Հանձնաժողովների աշխատանքին վերաբերող նախնական տվյալներն ասում են, վոր վնչ տնտեսավարները, վնչ արհեստական կազմակերպությունները ժամանակին չեն կենտրոնացրել պատշաճ ու աղջուրյուն ինքնարժեքի հարցերի վրա. Բանվորական մասսան անհրաժեշտ չափով մոքիլիզացիայի չի չհնթարկվել սոցիալիստական շինարարության այս կարևորագույն հարցի շուրջ»:

Ահա այն լեզրակացությունը, թե ինչու կուսանկցության դիրեկտիվը չեն կիրառված լրիվ կերպով։ Մանավանդ պետք է ինկատիւուննալը վոր շատ գործարաններ կան, վորտեղ հետազոտությունից հետո պարզվել ե, վոր կարելի լի վոչ թե 7 տոկոսով իջեցնել ինքնարժեքը, այլ 10 տոկոսով։ Ուրեմն 7 տոկոսն ամենաբարձր տոկոսը չե, այլ ուղերդվ կա, 7 տոկոսը միջին տոկոսն ե:

Հայաստանում այդ ռեզիլիքսերն ավելի մեծ են, ուրեմն կուսակցության դիրեկտիվը ավելի շուտ կարելի է կիրառել: Այնինչ մենք շատ որինակներ կարող ենք բերել, յերբ այս կամ այն ձեռնարկությունը չի ոգտագործում բոլոր այն ռեսուրսները, վորոնք գտնվում են նրա տրամադրության տակ: Մենք պիտի կարողանանք անփութության, անպատճանատվության ու թափթափածության իներցիան հաղթահարել կուսակցության դիրեկտիվը լիուվի կատարելու գործում:

Մենք պիտի վերջ տանք չինո՞ւնիկական, ծեփական, բյուրոկրատիկ վերաբերմունքին մեր տնտեսական կյանքի գլխավոր ու կենտրոնական խնդիրների իրազործման ասպարհութ:

Ամենակատաղի պայքար՝ խանգարողների դեմ։ Խանգարժեքնեցնելու միջոցներ. կան ու ինքնարժեքը պիտի իջեցնել։ Ահա թե ինչ ե ասում Վ. Ի. Լենինը. «Որինակելի կոմմունաները պետք ե ծառայեն և կծառայեն վորպես յետ մնացած կոմմունաների դաստիարակիչներ ուսուցիչներ, առաջ զցողներ. մամուլը պետք ե ծառայի վորպես ու ցիալիստական շինարարության գենք, ծանոթացնելով որինակելի կոմ-

մուսաների հաջողություններին՝ իրենց բոլոր մանրամասնություններով, ուսումնասիրելով նրանց հաջողության պատճառները, նրանց անտեսության գործ դրած պրիոնները, մյուս կողմից «սև տախտակի» գրելով այն կոմմունաների անունը, վորոնք համառորեն պահպանում են «կապիտալիզմի տրագիցիաները», այսինքն անսարչիան, գատարկապորտությունը, խառնաշփոթությունը, սպեկուլյացիան»:

Սև տախտակին այն ձեռնարկությունները, վորոնք չեն ուղում իրագործել կուսակցության գիրեկտիվը, սև տախտակին նրանց, վորոնք խանգարում են սոցիալիստական շինարարության գործին:

Ի՞նչո՞ւ ամբողջությամբ չի իրագործված այդ գիրեկտիվը. շատ պատճառներ կան, վորոնց պետք ե փնտուել աշխատանքային ցուցանիշների մեջ, Վորոնք են աշխատանքային ցուցանիշները: Ամենից առաջ մեր ձեռնարկներում դեռևս ունենք ավելորդ բանվորական ուժ. այդ բանվորական ուժն, իհարկե, չի կարող իջեցնել, այլ ընդհակառակը, բարձրացնում ե ինքնարժեքը. ովք ե մեղավոր, վոր ավելորդ բանվորական ուժ կա: Այստեղ մեղքի մի մասն ընկնում ե տնտեսավարների վրա, վորոնք անփուլթ կերպով են վերաբերվում բանվորական ուժի ոգտագործման հարցին: Մեղքի իերկորդ մասը պետք ե ընկնի աշխատանիշի ծորովդական կոմիսարիատի և արհմիությունների վրա, վորոնք շատ անգամ դիմադրում են, վորպեսզի այդ ավելորդ ուժը դուրս հանվի արտադրողականության պրոցեսից:

Սխալ կլինի կարծել, վոր ավելորդ բանվորական ուժի գոյությունը արտադրողական պրոցեսում միայն տնտեսավարների մեղքն է: Բնկեր Մանդալյանը չի կարող պարծենալ, վոր այն, ինչ վոր կախված է նրանից, նա արել ե, վորպեսզի ավելորդ բանվորական ուժից ազատի արգլունաբերությունը: Այս խնդրին կապված ե աշխատանքի արտադրողականության հարցը: Բնկ. Զեկասինը, մանավանդ ընկ. Շամշանը թվերով ապացուցեցին, վոր արտադրողականությունը ինչպես պեմզայի հանքերում, այնպես ել պղնձահանքերում բավական բարձրացել ե, ուրիշ բան ե, յեթե այդ արտադրողականությունը պլանի իրադրումից յետ ե մնացել:

Ցեթե մենք համեմատում ենք անցյալի հետ, նկատում ենք, վոր բավականին զգալի կերպով բարձրացել ե աշխատանքի արտադրողականությունը: Աշխատանքի արտադրողականության բարձրացում ամենից առաջ բացարձարվում ե բանվորության աշխատացման ու վոգերության բարձրացումով, վարչության կողմից ձեռք առած միջոցներով: Պեմզայում կարծես տեխնիկական և աղմինստրումենտիվ միջոցներն առաջին տեղն են բանում աշխատանքի արտադրողականու-

թյան բարձրացման մեջ: Այս տարբերությունը մեզ համար մեծ նշանակություն ունի. դա նշանակում ե, վոր պեմզայի պրոֆմիութենական աշխատանքների վրա պետք ե դարձնել ավելի լուրջ ուշադրություն:

Համամելիութենական մասշտաբով մենք ունենք աշխատանքի արտադրողականության բարձրացում 10-ից 11 տոկոս, բայց գիրեկտիվը 17 տոկոս ե, մոտավորապես 6 տոկոս գիրեկտիվի կտարումից յետ հնք մնում: Արտադրողականության ուժերի բարձրացման ամեն մի տոկոսը հավասար ե ինքնարժեքի իջեցման մեկ Յ-րդ տոկոսին: Ուրեմն 3 տոկոսը հավասար ե ինքնարժեքի մեկ տոկոսին, իսկ 6 տոկոսը հավասար ե 2 տոկոս ինքնարժեքին, իսկ ինքնարժեքի 2 տոկոսը հավասար ե 250—300 միլիոնի: Աշխատանքի արտադրողականության ու աշխատանքային դիսցիպլինայի խնդրում հարկավոր ե հիշել կենինի խոսքերը՝

«Յուրաքանչյուր սոցիալիստական հեղափոխության մեջ, այն բանից հետո, չերք վճռված ե իշխանությունը պրոլետարիատի կողմից նվաճելու խնդիրը, և լուծվում է հիմնականում ու ելական գծերով, թե ինչպես եքսպրոլիտացիալի լենթարկել եքսպրոլիտարերին, առաջին պլան ե քաշվում կապիտալիզմից ավելի բարձր հասարակակարգ ստեղծելու արժատական խնդիրը, այն ե՝ աշխատանքի արտադրողականության բարձրացումը, իսկ դրա կապակցությունը (ու զրա համար) և նրա ավելի բարձր կազմակերպությունը:» Ի՞նչպես ե դնում կենինը «ավելի բարձր, քան կապիտալիզմը, հասարակակարգ ստեղծելու» կամ արտադրողական ուժերի բարձրացման հարցը: Նա ասում է. «Արտադրողականության բարձրացումն այն ժամանակ պահանջում է ամենից առաջ ապահովել խոշոր ինդուստրիայի նվութական հիմքերը—վառելիքի, իերկաթի արտադրության, մեքենաշինության, քիմիական արդյունաբերության զարգացում.. Աշխատանքի արտադրողականության բարձրացման մեկ ուրիշ պայման հանդիսանում ե նախ և առաջ բնակչության մասնակիությունների կրթական և կուլտուրական վերելքը... Ցերկորդ՝ տնտեսական վերելքի պայման հանդիսանում ե աշխատավորների կարգապահության բարձրացումը, աշխատել կարողանալը, աշխատանքի արագությունը, ինտենսիվությունը, նրա լավագույն կազմակերպությունը...»

Հարկավոր ե զրա հետ միասին, ընթանալով դեպի աշխատանքի արտադրողականության բարձրացում, հաշվի առնել կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակի առանձնահատկությունները, վորոնք պահանջում են, մեկ կողմից, վորպեսզի դրվեն մրցության սո-

ցիալիստական կազմակերպության հիմքերը, իսկ մյուս կողմից պահանջում են՝ գործադրել հարկադրանք, վորպեսզի պրոետարիտարի գիշտատուրայի լոգունքը չփոխվի՝ «պրոետարական իշխանության» կիսելանման վիճակի պրակտիկալում:

Անա թե ինչպես ե զնում լենինը հարցը: Այսպիսով՝ ընկերներ, թեև մենք ունենք աշխատանքի արտադրողականության բարձրացում, բայց այդ բոլորը բավական չեն:

Պատահում ե, վոր արտադրողականությունը բավական բարձրանում ե, իսկ մյուս կողմից տալիս են պրոստոյներ՝ նյութ չկա; մեքենաներն անհամապատասխան վիճակի մեջ են և ալլն, այդ նշանակում ե, վոր հսկողություն չկա: այստեղ մեղքն ընկնում ե տեխնիկական դեկավարության վրա: Ինչժմ յենք հարցը այսպես դնում: Վորովինեական կան կարծիքներ, վոր իբր թե ինքնարժեքի թուզլ իջեցնելու և արտադրողականության թուզլ բարձրացման պատճառները բանվորներն են. շատերն ել զնում են մեղքը միայն ադմինիստրացիայի վրա: Պետք ե հարցը դնել այսպես, վոր մեղավորը թե բանվորն ե, թե ադմինիստրացիան: Խնքնարժեքի իջեցման գործում պետք ե մասնակցեն թե բանվորը, թե կոմմունիստը, թե կոմսոմոլիստը և թե պրոֆմիությունները: Այս կամ այն դեպքում կարելի լե բացատրել և ասել, թե ով ե ավելի մեղավոր և ով ե սիալ, իսկ գիրեկտիվը չկատարելու համար մեղքը գցել իրար վրա՝ դա սիալ ե: Այստեղ բոլորս ել պետք և աշխատենք այդ բացը վերացնել:

Ընկերներ, զեկուցողն ասաց, վոր աշխատավարձը պղնձահանքերում բավական բարձրացել ե, և մենք ստանում ենք այնպիսի տպագորություն, վոր աշխատավարձն ավելի լի բարձրացված, քան թե ծրագրված եր:

Դուքս ե գալիս, վոր աշխատանքի արտադրողականությունը պլանին չի հասել, իսկ աշխատավարձը պլանից ավելի բարձր ե: Անշուշտ մենք չենք կարող աշխատավարձը միևնույն մակարդակի վրա թօղնել: Նա վորոշ չափով պետք ե բարձրանա: Սա կնշանակի, վոր ել ավելի պետք ե առաջ գնա արտադրողականությունը, վորովինեական մենք չենք կարող կանգնեցնել աշխատավարձը: Ավելի պետք ե բարձրացնել արտադրողականությունը, վորպեսզի հնարավորություն ունենանք առաջ քաշիլ հետամնաց գոտիները աշխատավարձի բարձրացման ասպարիզում:

Անցնենք աշխատանքի գիսցիպիինային: Միջանի որինակ ԲԳՏ հետագոտություններից՝ կատարված Ալլահվերդիում և Անի-Փեմզալում ու մ. ե):

1. Մալիսին մի բանվոր գործալքում թուզլ տվեց իրեն՝ հարսանիքի մասնակցելու պատճառով. Կեկ չհամաձայնեց վարչության վորոշմանը բանվորին արձակելու մասին: Գործալիք բանվորի նկատմամբ վոր մի միջոց ձեռք չառնվեց (Անի-Փեմզա):

2. Մալիսի 10-ին մի տասնապետ, առանց վարչության գիտության, թողեց աշխատանքն ու գնաց: Նույն այդ տասնապետը, իր մասին խոսք լինելիս, իրեն կողիր մեջտեղ ե բերում իր լավ աշխատանքը, վորի ապացուց նա համարում ե բանվորների լավ վերաբերմունքը դեպի ինքը («պաշտկանություն», տես՝ կենտկոմի շրջաբերականը):

Արհմիությունները, վճռական պայքար մղելով անտեսական որպանների քյուրության պահպանիների դեմ, լեռանդագին պաշտպանելով բանվորների անտեսական և կենցաղակին շահերը, պարտավոր են՝ պրոլետարների ամենագիտական կազմերի վրա հենքելով՝ յեանդուն պայքար մղել սանձարձակ վերաբերմունքի դեմ դեպի արտադրությունը և աշխատանքային գիսցիպիինան (կուսկոնֆերենցիայի բանաձեկից):

Ցեղել ե մի դեպք, յերբ մի խումբ բանվորներ բռողք են տվել տասնապետի դեմ, վոր պահանջնությունը և ցեղել աշխատանքի խնդրում: Հետո բանվորներն իրենք խոստովանել են, վոր նո իրենց դուր չկ գալիս միայն այն պատճառով, վոր խիստ ե (Անի-Փեմզա):

3. Մի կոմիերիտական աշխատանքի ժամերին զբաղվում ե ինքնաքննադրությունը: Վարչությունը շախտկոմի հետ գնում են հանքերը և առաջարկում են նրան աշխատանքի անցնել: Կոմյերիտականը գեն ե գցում բահը և հրաժարվում ե աշխատելուց:

ԼեզեՄ գծով նրան վոչ մի դատի չեն յենթարկում: Կոմյերիտականը դրանից հետո ինքնագլուխ գործալքում ե յերեք որ, և շախտկոմի առաջարկությամբ նրան վճարում են այդ որերի աշխատավարձը (Անի-Փեմզա):

Կուսակցության ԽԽ համագումարը կրկին ընդգծեց, վոր արհմիությունները պետք ե վճռական պայքար մղեն իրենց մարմինների և ներկայացուցիչների այնպիսի փորձերի դեմ, յերբ նրանք անմիջական և անձեռնաս կերպով միջամտում են ձեռնարկությունների և նրանց միավորումների կառավարման ու վարչարար գործողություններին, վորի հետևանքով տեղի լե ունենում արհմիութենական և անտեսական ֆունկցիաների շփոթում ու ժողովրդական տնտեսության կառավարման գործի մեջ մասամբար վերկվություն և անպատասխանառվություն ե մտցվում:

4. Զիուն ծեծելու համար ապրիլին արձակվում ե աշխատանքից մի ձիավար կոմյերիտական: Շախտկոսի նախագահը վարչության գլխի վրայով տասնապետին յերկտող ե դրում: «Առաջարկում եմ անմիջապես թույլ տալ նրան, վոր աշխատիք: Գործը մինչև դատարան ե հասնում» (Անի-Գեմգա):

«Միանձնյա վարչության ձեւ չի բացասում լայն մասսաներին կառավարման գործին մասնակցության կանչելը, նա միայն սահմանագծում և անմիջական կառավարման ֆունկցիաները ուսուցումից»:

5. Համկոմկուսի անդամ մեկն աշխատում ե Ալլահվերդում 28 թվի նոյեմբերի 16-ից մինչև 29 թվի ապրիլի 20-ը, 120 բանվորական որից նա գործալքում ե 91-ը: Յերբ նրանց գոնդում են, նա հայտարարում ե. «Յես քեզ հետ «Խորհրդային Հայաստանի» միջոցով կիսում»: Մինչև մայիսի 20-ը կուսակցական գծով նրան դեռ վոչ մի կուսակցական դատի չելին յենթարկել (Ալլահվերդի):

6. Ամբովատորիայի բժիշկը մերժում ե ազատել բանվորին աշխատանքից, յերբ նա քերծված ունենալով՝ դիմում ե բժշկին. բժշկի վրա հոդված են գրում պատի լրագրում:

Մեկ ուրիշն արհեստականորեն բարձրացնում ե իր տաքությունը: Կեղծիքը բռնում են: Սիմուլատը թղթակցություն ե գրում «Խորհրդային Հայաստանին», վոր տպվում ե:

Յոթ տարի աշխատել ե իր գործը՝ բանվորների ու կազմակերպության վկայությամբ՝ միանդամայն գոհացուցիչ տանող բժշկի մասին պատի լրագրում գրում են՝ «Այդպիսի բժիշկ մեզ պետք չի» (Ալլահվերդի):

Ընկերներ, ինձ թվում ե, վոր այս որինակները չափազանց շատ բան են ասում: Գուցե ել ավելի որինակներ կարելի յե բերել բայց այս որինակներն ել բավական են, վորպեսզի պարզ լինի, թե վորքան մեծ աշխատանք պիտի տանենք այդ ֆրոնտում: Զպեաք ե կարծել, վոր պրոլետարիատի դիկտատուրան կիսելի նման մի բան ե: Կան մարդիկ, վորոնք մեծ-մեծ խոսում են հեղափոխության ու ազատության մասին, բայց հաճախ նրանք արտահայտում են մանր բուրժուական, անարխիստական, պոչական տենդենցներ: Ինկ պատահում ե, վոր մեր լավ ընկերներից շատերն այդպիսիներին ավելի լին լրում ու յերեմն գրանց ազդեցության տակ ընկնում: Պետք ե հասկանալ, թե վորտեղից են գալիս այդ տրամադրությունները: Պետք ե հասկանալ, վոր խվոստիզմը տեղ չպետք ե ունենա մեր շարքերում:

Ալլահվերդիում, մի ժողովում դուրս ե գալիս Արամայիս Յերիցյանը, վորն իրեն ամենամեծ հեղափոխական ե հաշվում, բայց վորն իսկա-

պես տիպիկ, կատաղած մանրբուրժուա լի, տիպիկ մեշան ե, նա հարց ե դնում, թե ինչո՞ւ ինքը մետաքսե թաշկինակ չունի, թե բանվորներին պետք ե մետաքսե թաշկինակներ բաժանել: Այդ Արամայիսը քայքայված ու կատաղած մանր-բուրժուա լի, նա կարծում ե, վոր մեր պրոլետարական դիկտատուրան՝ դա նույն կապիտալիստական պետությունն ե:

Նատ հաճախ մեր կուսակցական և պրոֆեսսիոնալ որգան ները հարկավոր վերաբերմունքը չեն ցույց տալիս այդպիսի կոմմունիստական բարին: Պատահում ե նաև, վոր բանվորների վրա հսկող տասնապետը (իսկ դուք գիտեք, վոր տասնապետը բանվորներից ե առաջ քաշված) ուշագրություն չի դարձնում աշխատանքի դիսցիպլինարի խախտման վրա՝ մտածելով, վոր այսոր նրան առաջ են քաշել, վազը յետ կքաշեն, պետք ե ելի շարքաթին բանվոր դառնա և լավ կինի, վոր բանվորների հետ հարաբերությունները չփչացնի: Այդպիսի հոգեբանություն լեռնահանսկերում շատ կատ Յեկ այդ տեսնդենցների գեմ արհմիությունները բավարար չեն պալքարում: Հարկավոր ե այդ մասին մտածել: Դա պետք ե պարզ լինի բոլորի համար: Վճրտեղից են այն աղբյուրները, վորոնք ազդում են աշխատանքի դիսցիպլինարի թուլացման վրա: Ամենից առաջ բանվորության կազմի մասին, այդ մասին խոսվեց այստեղ: Վոչ այնքան լավատես պետք ե լինել, վոր ասել՝ կարճ ժամանակում ամեն ինչ կանենք, և վոչ ել այնքան հոռետես, վոր չկարողանաք փոխել այսորվա դրությունը: Ընկ Խանվերդի բանվորներն ասաց, վոր 95 տոկոսը գյուղացի լին. դա չափազանցություն ե. այստեղ կիսապրոլետարիատի տոկոսը համապատասխանում ե մոտավորակես Դոնբասսին: Մենք ունենք այստեղ 12—15 տոկոս վորակել բանվորների:

Այդ հարցի ուսումնակիրության ինդիրը պետք ե դնել շատ լուրջ: Պետք ե ուսումնակիրել, իմանալ թե ով ե այդ գյուղացին: Ընդհանուր առմամբ դա չքափոր ու մասամբ միջակ գյուղացի յե, բայց կան և ունենալու, կան և կուլակներ: Յեթե բանվորության կազմն այնպիսի յե, վոր 85 տոկոսը գյուղից ե գալիս, յեթե կազմը հոսող ե, ապա պետք ե յեղափոխներ, վոր հիվանդագին տենդենցները, վոր ունի մանր բուրժուալիզիան, գալիս են գեպի մեր գործարաններն այդ կանակների միջոցով: Նա նայում ե գործարանի վրա վորպես ժամանակավոր միջոցի, նրա նպատակը գյուղի իր տնտեսությունն ե, իսկ գործարանի աշխատանքի վրա նայում ե, վորպես ժամանակավոր աշխատանքի: Այդ գործարանը նրա համար ոժանդակիչ աղբյուր ե իր տնտեսությունը լավացնելու համար, և վերջապես նա իր հետ ըերում ե իր բոլոր մանր-բուրժուական հիվանդությունները: Ահա թե ինչու Մեր տնտես, ըինար.—3

ալս բոլորը պետք ե ի նկատի ունենանք, իերբ խոսում ենք լեռնահանքերի բանվորների կազմի մասին։ Բանվորների կազմի խնդիրը չափազանց մեծ նշանակություն ունի և աշխատանքի դիսցիպլինայի բարձրացման, և ինքնարժեքի իշեցման համար, ապա ուրիշն սոցիալիստական շինարարության համար։

Մեր կուսակցական որդաններն ու արհմիությունները պետք ե տանեն կայուն, համառ, սիստեմատիկ աշխատանք, վորպեսզի մենք կարողանանք հետզետե պատրաստել իսկական բանվորական կազմեր։

Պետք ե նշել նույնպես այս, վոր աշխատանքի դիսցիպլինայի վրա ազդում ե մեծ չափով տեխնիկական և ադմինիստրատիվ սոցանների թուզ ղեկավարությունը։ Թվերն ասում են, վոր մայիս ամսին աշխատանքի դիսցիպլինան ուժեղացել ե։ Այդ բացատրվում և նրանով, վոր տեղերն ուժեղ կամպանիա յեն՝ տարել տեղիրում։ Բայց վորովհետև այդ աշխատանքները տարել են նրանք կամպանիայի միջոցով, դրա համար դիսցիպլինայի ուժեղացումը վորով չափով ժամանակակիր բնույթը ե կրում և նորից թուլանում ե։ Այստեղից պետք ե յեղակացնել և մի ավելորդ անգամ շեշտել, վոր այդպիսի հարցերը պետք ե դնել վոչ թե հարվածային կամպանիայի ձևով, այլ իրրև սիստեմատիկ, տեսական աշխատանք։ Աշխատանքի դիսցիպլինայի ու աշխատանքի արտադրողության մասին խոսքս վերջացնելու համար լով կիներ կենինից մի կտոր հիշեցնել։

Լենինը շատ անգամ ե շեշտել։

«Ամեն մի խոշոր մեքենական ինդուստրիա, ալսինքն սոցիալիզմի հենց նյութական, արտադրական աղբյուրն ու հիմքը պահանջում ե հարյուրավոր, հազարավոր և տասնյակ-հազարավոր մարդկանց միատեղ աշխատանքին ուղղություն տվող կամքի անպայման և խստագույն միասնություն, պահանջում ե հազարների կամքը չէնթարկելու մեկի կամքին։»

Հեղափոխությունը, ճիշտ ե, ջախջախել ե ամենագարավոր, ամենահին, ամենաամուր ու ամենածանր շղթաները, այն շղթաները, վորոնցով կաշկանդված եյին մասսաները, բայց այդ յերեկ իր։ Ալսոր, այսոր ուրիշ ե. այսոր նույն հեղափոխությունը, հենց սոցիալիզմի կառուցման համար, ստիպում ե ու պահանջում, վորպեսզի առանց ալլեալության մասսաները հպատակվեն աշխատավորական պրոցեսսների ղեկավարների միասնական կամքին։

Ով չի հասկացել այս հասարակ միտքը, նա վոչինչ չի հասկացել։ Մի ուրիշ աեղ կենինն ասում ե.

«Բուրժուական և մանր-բուրժուական տարերքը կովում են խորհրդային իշխանության գեմ յերկու ձևով։ մեկ՝ կողմից ուղղակի զինված ապստամբությունների միջոցով, իսկ մյուս կողմից այդ տարերքը գործում ե ներսից, ոգտագործելով քայլայման յուրաքանչյուր թուլություն՝ կաշառելու համար, անդիսցիպլինարությունը, սանձաթողությունը, քառուն ուժեղացնելու համար։»

Մանր-բուրժուական տարերքի այդ ազդեցությունը մենք շոշափում ենք ակնհայտնի կերպով, յերբ ուսումնասիրում ենք դիսցիպլինայի խնդիրն ու առանձին բանվորների կամ բանողների առանձին խմբերի դիրքը ու վերաբերմունքը դեպի այդ աշխատանքի գիտության—այն առանձին խմբակների ազդեցությունը, վորոնք բերում են իրենց հետ վոչ պրոլետարական հակումներ, կորզողական արամադրություններ, խուլիզանություն և մանը բուրժուական անարխիզմ։

Մենք ասում ենք, վոր թեակոխել ենք դասակարգային պայքարի սրման շրջանը։ Մենք ասում ենք, վոր կապիտալիստական ելեմենտներն այդ դասակարգային կովի սրման շրջանում կատաղի ընդդիմադրություն են ցուց տալիս առաջ շարժվող զարգացող ու ամրացող հաղթական սոցիալիզմին։ Իսկ կազմալուծված կամ վոչ պրոլետարական միավորներից յեկող փոքրիկ, բայց դեռևս ապրող ու մինչև իսկ դեռևս ծնվող ու աճող խմբակները խանգարում են մեր ընդհանուր գործին, բանվոր դասակարգի պատուական, գաղափարի գավաճանները, սրիկաներն ու պնակալեզները մոռացության տալով դասակարգի շահերը՝ թուլացնում են պրոլետարիատի, դիկտուտուրան՝ ձգտելով այն փոխարինել պրոլետարական իշխանության կիսկային գրությամբ։

Այդպիսիների մասին ե, վոր կենինն ասել ե.

«Միթե դասակարգային պայքարը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցնելու շրջանում չի կայանում նրանում, վոր պաշտպանվեն բանվոր դասակարգի շահերն այնպիսի բանվորների քանակով չնշին խմբակներից, խմբերից, շերտերից, վորոնք (այդ բանվորները) համառորեն կառչած են կապիտալիզմի տրադիցիաներից, սովորքներից և շարունակում են նայել խորհրդային պետության վրա առաջկա ժամանակների հայցքով—տալ իրեն «քիչ աշխատանք» և քամել տիրենից շատ փող։»

Այդ հանգամանքի վրա չափազանց մեծ ուշադրություն պետք ե գարձնենք, վորովհետև վուսանք կարծում են, թե պրոլետարիատի դիկտուտուրան՝ դա կիսելի նման բան ե, պրոլետարական դիկտուտու-

բան չափազանց խիստ և դաժան բան ե, և դա պետք ե լավ իմանալ-յեթե այդ մասին գիտեն մեր թշնամիները, հարկավոր ե, վոր այդ մասին իմանան և մեր բարեկամները, հարկավոր ե, վորպեսզի այդ վոչ-վորակալ բանվորները, վոր մենք ունենք, վորոնք դեռ չեն անցել կապիտալիստական գործարանի դպրոցը (իհարկե դպրոցը չակերաների մեջ) հարկավոր ե, վորպեսզի այդ բանվորները մեր գործարաններում զգան պրոլետարիատի միասնական կամքը, վորը մարմացնում և արտադրողական պրոցեսը ղեկավարող տնտեսական կամք բանվորների մեջ, և այդ պրոլետարիատի կամքը պետք ե լինի նրա համար այն ուժը, վորին նա պետք ե հպատակի: Այդպես ե դրվում հարցը պրոլետարիատի ղեկատուրայի ժամանակ: Այդ ուղղությամբ պետք ե աշխատանք տանել:

Վոմանք կարծում են, վոր կուսակցության քաղաքականությունը ղեպի բանվորներն ու զուղացիները կալանում ե նրանում, վոր գնաս նրանց մոտ, նստես կողքին, ասեա՞ քեզդ ինչպես ե, միքիչ ու խաժիվատ անես և այն. բանվորն ու զյուղացին կիսենի բարիշնաշ չեն, խնդիրն այն ե, վոր պրոլետարիատի ղեկատուրան ամրացնենք, վորպեսզի կարողանանք առաջ տանել սոցիալիստական շինարարությունը: Ծուլերը, վորոնք արևելան ծուլությամբ են հիվանդ, վորոնք պարսկական, ստրկական տեմպով են ուզում աշխատել, իհարկե չեն հավանում այդ բանը: Իսկ մենք կասենք՝ ստանան նրանց հետ, իսկ մենք կշարունակենք մեր գործը:

Հետեւյալը, վորը մեծ նշանակություն ունի ինքնարժեքի իջեցման և մեր աշխատանքների զարգացման համար, դա աշխատանքի արտադրողական պրոցեսների կարգավորումն ե: Աշխատանքի պրոցեսների անկանոն ու անկարգ լինելն ստեղծում ե բավականաչափ պրոստոյներ: Անկասկած մեծ գեր ե խաղում ինքնարժեքի իջեցման դիրեկտիվի վոչ լրիվ իրագործման հարցում աշխատանքային ու արտադրողական պրոցեսների անկանոն ու անկարգ լինելը: Պրոսաօյը շատ հաճախ կազմակերպչական ու տեխնիկական սխալների հետեւանք է: Յերբեմն այս կամ այն գործարանը, այս կամ այն ցեխն աշխատանքն սկսում ե առանց անհրաժեշտ պատրաստության կամ նախագծի, կամ գործիքներ են պակասում, կամ վորեն ուրիշ նյութ, և գործը պրոստոյ ե տալիս և այն:

Ուշադրության արժանի յե այն հանգամանքը, վոր շատ անգամ այդ պրոստոյը հաշվի չի առնվում, ու չեն ուսումնակարգում դրա պատճառները: Դա արդեն հանցագործություն է: Այստեղ պիտի շեշտեր վոր հաճախ աշխատանքի արտադրողականության ու բանվոր դաս-

կարգի վոգեորության թափը կարող ե իջնել ու թուլանալ այդ աշխատանքային ու արտադրողական պրոցեսների անկանոն ու անկարգ լինելու պատճառով, ու դրա մեղքը գլխավորապես ընկնում ե տեխնիկական աղմինիստրատիվ ղեկավարության վրա:

Այն ինժեները, այն տեխնիկը, այն տնտեսավարը, վոր իր ուժեցը մոբիլիզացիայի չի յենթարկի պլուստոյներ չստեղծելու համար, նա գիտակցաբար թի անգիտակցաբար կատարում ե վատսարար աշխատանք:

Հետևյալը՝ դա հետախուզական աշխատանքներն են, պետք ե ասել, վոր գրությունն իսկապես լուրջ ե մանավանդ պղնձի արդյունաբերության մեջ: Հետախուզական աշխատանքը լին և մնացել պարզ ե, վոր առանց այդ աշխատանքների զարգացման չեն կարող լինել մյուս աշխատանքները, և գործը կարող ե կանգնել: Այս տարի հետախուզության համար տված ե 750,000 ոռերի, և ըսկեր Զեկասինը միջոցներ ե ձեռք առնում, վորպեսզի ել ավելի արամադրվի այդ նպատակին:

Հետեւյալ հարցը կուսակցական ղեկավարության հարցն ե: Մեզ մոտ չեն սիրում խոսել այն մասին, թե արդյոք կուսակցական ղեկավարությունն արել ե ամեն ինչ, վորպեսզի ինքնարժեքն իջնի: Իհարկե, նվաճումներն ակնհայտն յեն, բայց բացեր կան և պետք ե խոսել այդ մասին: Անցյալ տարվա 4-րդ պլենումի վորոշումների մեջ կա մի կիտ, վորն ասում ե՝ սոցիալիստական շինարարության կանոնավոր ծավալումն ապահովելու նպատակով մեծագույն չափով ուժեղացնել կուսակցական որգանների (սկսած քիջներից մինչև ԿԿ-ը) ղեկավարությունը տնտեսական աշխատանքի ասպարիզում, ձգտելով, վոր տնտեսական և վոչ մի քիչ թե շատ խոշոր ձեռնարկում չկատարվի առանց կուսակցական կազմակերպության մամնակցության և միենույն ժամանակ տնտեսական որգաններն աղատ լինեն բծախնդիր խնամակալալությունից:

Այդ պունկտը՝ յեթե կենտկոմի կողմից իրագործված ե, տեղական որգանները դեռևս չեն կարող գրանով պարծենալ: Յեթե վերցնենք Ալլահիվրդու ուայկոմինիստերի որակարգը և տեսնենք, թե վոր կոսն են կազմում տնտեսական հարցերը, ապա կտեսնենք, վոր տընաւեսական հարցերի տոկոսը դեռևս անհրաժեշտ չափի չի հասել: Ավելի քիչ են քննության առնվում այդ հարցերը, քան թե հարկավոր ե: Ինչ կասեք, յեթե տսեմ, վոր մեր ստացած տեղեկությունների համաձայն վոչ Ավախնի ուայկոմը, վոչ ել Ալլահիվրդու ուայկոմը չեն բնել ինքնարժեքի իջեցման հարցը: Առանձին այդ ցեխների մեջ ինչպես են տարգում այդ աշխատանքները, այդ ցեխերում ինչ միջոցներ են ձեռք առնված, վոչինչ չգիտենք: Մինուս ե դա, թե վոչ մինուս ե: Այն,

ինչ զոր տեղական ռայլումը կարող ե տեսնել, մենք կարող ենք չը-  
տեսնել Հայտնի յե, զոր կամպանիաներ տարվում են, բայց կամպա-  
նիայից հետո սիստեմատիկ կերպով ուսումնասիրվում ե ալդ հարցը,  
հաշվառումը դրված ե այնպես, ինչպես հարկավոր ե: Վոչ: Բաց ե  
դա թե զոչ. անպայման 4-րդ պլինումի հետ միասին մեր 6-րդ համա-  
գումարի զորոշումների մեջ ունենք կետ, ուր համագումարը պահան-  
ջում ե մորթիլզացիայի լենթարկել կուսակցական, տնտեսական, պրո-  
ֆեսարունակ մարմինների և բանվորական մասսաների լեռանդն ու վողը  
ստեղծագործական նախաձեռնությունը՝ ռացիոնալիզացիայի, աշխա-  
տանքի դիսցիլինայի և արտադրողականության բարձրացման, ինք-  
նարժեքի իշեցման և արտադրության վորակի բարձրացման համար,  
առաջին հերթին արտադրական հանձնաժողովների աշխատացման մի-  
ջոցով, նպատակ ունենալով հասցնելու աշխատանքի արտադրողակա-  
նությունը մեզանում միջին միութենական մակարդակին: Ահա ձեռք  
չափանց կարեոր դիրեկտիվ, բայց այդ դիրեկտիվը թուց է կիրառ-  
ված տեղական կուսակցական ղեկավար մարմինների կողմից: Ընկ-  
Ստալինն ասել ե.

«Դիրքում են բանաձևեր, առաքվում են դիրեկտիվներ, բայց վոչ-վոք չի ուզում հոգ տանել հարցնելու իրեն՝ իսկ ի՞նչ զրության մեջ ե այս բանաձևերի և դիրեկտիվների կատարումը, իրագործված են արդյոք դրանք գործնական կյանքում, թե մահուդի տակ են դըր-վում»:

Կարծես թե Ալլահի բրդու և Ղափանի ռայկոմների մասին ե  
ասված այդ: Յեթե հիշենք այն հանգամանքը, վոր ոնկոնստրուկցիա-  
տի շրջանում ամենից առաջ պահանջվում է ել ավելի վորակիալ ղեկա-  
վարություն, ղեկավարության վորակի բարձրացում, ապա ազդ բացի են  
ել ավելի մեծ պետք և համարել: Լենինը սիրում եր կրկնել աշ-  
խատանքի «իսկական որինակելի լինելու», «իսկական որինակելի ղեկա-  
վարության» վորակի մասին:

Այս մտքերն ամենից ավելի այսոր պետք է հիշել. Պետք է իմաստը, վեր առանց զեկավարության փորակի բարձրացման մենք չենք կարող կատարել այն գլխավոր խնդիրը, վոր ասում է կազիտալիսական յերկրներին հասնել և նրանից անցնել: Այդ խնդիրը յերբեք մենք չենք կարող իրականացնել կյանքում, յեթե չդնենք մեր զեկավարության վորակի հարցը:

Պետք ե հիշել, վոր վերջին ժամանակներու մենք նկատում ենք բոլոր կուսակցական մարմինների աշխատանքների մեջ այդ բեկումը՝ ղեկավարության վորակի բարձրացման բեկումը։ Բայց միաժամանակ

պետք ե շեշտել և բացերը: Ամենից առաջ գեկավարության կոնկրետացման մասին: Ընկերությունը պահպանում է:

«Հարկավոր ե կարողանալ յուրաքանչյուր մոմենտ գտնել շղթայի այն առանձին ողակը, վորից պետք ե ամբողջ ուժով բռնել, վորպեսզի կարողանանք մեր ձեռքին պահել վողջ շղթան և ամրապես նախապատրաստել հետեւյալ ողակին անցնելը, ըստվորում այն կարգը, թե վոր սղակից հետո վորը պետք ե դա, նրանց ձևու ու միացումը, նրանց տարբերությունը միմյանցից անցքերի պատմական շղթայում այնպես պարզունակ և այնպես հիմար չեն, ինչպես սովորական, դարբնի շինած շղթայինը»:

կենինքան գիծը յուրացված ե կուսակցականների ճշշող ստամանության ու անկուսակցական բանվորների ամենալավն խափերի կողմից։ Այն վճռական հարվածները, վոր ուիին մասսաները նախ տրոցիկիզմին, ապա աջ ու հաշտվողական, աջնացիոնալիստական թերման, մի կողմից, հիմնական քաղաքական կամպանիաների հաջող տանելը (խորհուրդների վերընտրական կրկնոգովորների), արհմիությունների մարմինների վերընտրություն, ինդուստրիալիզացիայի, փոխառության կամպանիա (այլն և այլն), գալիս հն ասելու, վոր մասսաների քաղաքական ակտիվության մակարդակն զգալիորեն բարձրացել է, և այս մասսաների վստահությունը դեպի կուսակցությունն ամրագել է։

Հեկավարության կոնկրետ լինելը լինթադրում ե 1) ղեկավար կուսակցական մարմնի կողմից կոնկրետ դիրքեկտիվ, կոնկրետ ցուցմունք, 2) այնպիսի միջոցներ ձեռք առնել, վոր առանովի այդ դիրքեկտիվի իրագործումը գործնականությամ: Ի՞նչ կնշանակի կոնկրետ դիրքեկտիվ. դա նշանակում ե ամենից առաջ կարողանալ լիրևան հանել այս կամ այն կազմակերպության համար, այս կամ այն բնագավառում, այն խնդիրները, վորոնք հիմնականն են, վորոնք գործության ողակին գեր են կատարում: Դա, իհարկե, շատ ել հասարակ բան չե: Զի կարելի արվեստականորեն կամ կամայականորեն այս կամ այն ողակն ընտրել: Գլխավորն ամստեղ կայանում ե նրանում, վորպեսզի, հաշվի առնելով աշխատանքի բոլոր պայմանները, գտնելով ու հասնել նրան:

Այս տեսակետից մի շաբթ բացեր կարելի յե արձանագրել արդունաբերական շրջաններում՝ Ալլահվերդում և Ղափանի ույյումների աշխատանքների մեջ, Նվաճումները հասկանալի լին: Այն, վոր նրանք կարողացել են տանել ահագին աշխատանք կուս. անդամների քաղաքական դաստիարակության ու անկուսակցական բանվորների մասսաներին քաղաքականական ընդգրկելու, — դա չի կարելի ժխտել:

Մենք նկատում ենք, վոր արտադրողական պրոցեսսների հետ կապված հարցերը քիչ են քննվում: Այդ հարցերի շուրջն անհրաժեշտ չափով չի կենտրոնացվում մասսաների ինիցիատիվան, նրանց ակտիվությունը, նրանց վոգերությունը, Յերկրորդ գլխավոր բացն այն ե, վոր Ե-րդ համագումարից հետո այդ ույյումները գեռես չեն կարողացել վերջնականապես ձևակերպել կուսակցական ակտիվի կազմակերպությունը: Զե վոր Լենինյան դասակարգային հաղթական դիրքերի վրա պետք ե կազմակերպել կուսակցական ձևակերպությունը:

Յերրորդ, ույյումները չեն կարողացել գեռես վորոշի աշխատանքի այն լեղանակները, վորոնք համապատասխանում են բանվոր դասակարգի տվյալ կազմին: Շաբթոն մեթոդներով աշխատանք չի կարելի տանել: Բանվորական կազմի ուսումնասիրության հետ Ալլահվերդում և Ղափանում՝ պետք ե մշակել աշխատանքի վորոշ, տվյալ պայմաններին համապատասխանող յեղանակներ ու ձևեր: Ինչու համար այդ բանը չի արված: Դա այնքան ել հեշտ բան չե: Իհարկե, ուեկոնստրուկցիայի շրջանը պահանջում ե աշխատանքի նոր մեթոդներ, վորին զուգընթաց հարկավոր են և ուրույն մեթոդներ: Հարկավոր ե այդ բացը վերացնել, վորպեսզի կարողանանք. անմիջապես, ղեկավարել արտադրողական պրոցեսսում կատարվող փոփոխությունները: Հարկավոր ե, բացի այդ բոլորից, վորպեսզի ույյումի քարտուղարը և պրեզիդիումի

անդամները կարողանան հասկանալ իրենց արդյունաբերության պրոցեսսները, վորպեսզի, յերբ բանվորը մի վորսից արտադրական խորհրդակցության ժամանակ դուրս ե գալիս մի բան և ասում՝ ույյումի քարտուղարը կամ անդամը չինի թե վոչինչ չհասկանան: Այդ բանը չափազանց վատ ազդեցություն ե թողում բանվորի վրա: Հարկավոր ե, վորպեսզի նա հասկանա, ուսումնասիրի, զբաղվի, հետաքրքրվի իր արդյունաբերության արտադրողական պրոցեսսներով: Յեթե նա այդ բաները չիմանա, նա վոչ մի բանվորի համար ավտորիտետ լինել չի կարող: Մենք չենք պահանջում, վոր նա ինժեները լինի, բայց ընդհանուր առմամբ պետք ե հասկանա գործը, նա պետք ե աշխատանքի ու արտադրության պրոցեսսների առանձին մասնիկները կապի մեր կուսակցության մեծ խնդիրների հետ, պետք ե՝ կարողանա մեծ գաղափարներն արտահայտել կոնկրետ, արտադրողական պրոցեսսների մի ջոցով և ընդհակառակը՝ պետք ե կարողանա արտադրողական պրոցեսսի այս կամ այն չերեւությը կապել մեր կուսակցական քաղաքանության ընդհանուր, մեծ գաղափարների հետ: Այդ տեսակետից մենք պահանջներ ունենք մանավանդ՝ Ալլահվերդու և Ղափանի կուսակցական աշխատակիցների նկատմամբ: Յես կարծում եմ, վոր այդ ույյուններում այսոր կուսակցական ղեկավարության տեսակետից յերկու գլխավոր հարց: մեկը՝ մասսայական քաղաքական աշխատանք առհասարակ ամբողջ բանվորության մեջ, յերկրորդը՝ ղեկավարել արտադրողական պրոցեսսն ու ներդրավել արտադրության կոնկրետ խընդիրներում մասսայի ակտիվությունը՝ կապելով այդ մեր կուսակցական ընդհանուր դիրեկտիվների հետ:

Յեկ յեթե այս յերկու խնդիրը համարենք գլխավորը, պետք ե, ուշեմն, այդ յերկու խնդրի վրա կինտրուսացնել մեր ուշադրությունը: Մերով ամբողջ ուշադրությունն այդ յերկու խնդիրների վրա, պիտի աշխատել ամեն մի կազմակերպության մեջ փնտոնել, գտնել այն վճռական ողակները, վորից պիտի պինդ բռնել: Այդ վճռական ողակները, իրավունք կուսակցական, խորհրդակին շարքերը, ներգրավենք հասարակական աշխատանքներին, ներգրավենք սոցիալիստական շինարարական աշխատանքներին, կարկավոր հարկավոր համապատասխան կադրերը: Այդ կադրերի ստեղծումն ահազին գործ ե: Դուք գիտեք, վոր մեր յերկրում տեխնիկները, ադրոնոմներն

ու այլ սպիցները չափազանց քիչ են։ Դուք գիտեք, վոր մեզ հարկա վոր են բոլորովին այլ տիպի ինժեներներ, տեխնիկներ, ագրոնոմներ ու առհասարակ սպիցներ, քան նախապատերազմական ու նախահեղափոխական շրջանում։ Նորերն ել քիչ են, ինդաններն ել վորակի տեսակեալից թույլ։ Մեր առաջնակարգ անելիքներից են.

1. Պահպանել հին սպեցներից նրանց, վորոնք անկեղծ ու աղ-նեվ կերպով տրամադրել են իրենց սոցիալիստական շինարարության (դրանց թիվը քիչ չէ):

2. Ստեղծել աշխատանքի միջավայրի ընկերական պայմաններ հին ու նոր սպիցների միջև և ամեն ջանք զործ դնել նոր սպեցների վորակը բարձրացնելու։ Ստեղծել նոր կազրեր, վոլունց առաջ պիտի քաշեն մեր միջից՝ կոմմունիստների, կոմիտաների, բանվորների, չքավոր ու միջակ գուղղացիների ու բարեկաների միջից։ «Միհաշխատանքների» պլանն իրագործել առանց նոր կազրերի անհնարինեացարկե, կազրերի հարցը վերջիվերջո կապված է մեր ամբողջ կուլտուրական ֆրոնտի հետ։ Իզուր չեր ասում էնինը, թե «մուժ ու անզրագետ ժողովուրդը հաղթել չի կարող»։ Աչա թե ինչու կազրերի մասին խոսելիս ամենից առաջ պիտի մտածել և այն մասին, թե ինչու, վորքան հաջող կտանենք մեր պայքարը գրագիտության ելեմենտար կրթության համար։ Կուլտուրական փրոնտը չափազանց կարևորագույն նշանակություն և ստանում մեզ համար։ Իդեալ, միքանի սպեցակերական լեռույթների մասին։ Ալահվերդում անցյալ տարի 18 ինժեներ կար, այս տարի 24 ինժեներ և, բայց ինժեներների մեծ մասը միքանի ամիս և, վոր աշխատում են այնտեղ։ Ինչպես կարող և աշխատանքը հաջող դնալ, լիթե ինժեները միքանի տարի չսստի։ Տեխնիկական գեկավարությունը շատ շուտ փոխվում է, հարկավոր և նրանց պահել, վորպեսզի նրանք քիչ յերկար նստեն գործին։ Վերն և ավելի լավ, վորպեսզի նրանք յերկար նստեն այնտեղ, թե դեմագոգիայով գրավվել, թե ինչու ինժեներներ և այլքայլ մաս

իհարկե, յեթե նրա մեջ վորեկ հականեղափոխական զիծ տեսնենք, նրան կքշենք, իսկ յեթե այդու չկա, պետք ե ստիգմատ կենցաղային պայմաններ, վոր նա ապրի: Ինչ վերաբերում ե վորակյալ բանվորների կադրի խնդրին՝ ինձ թվում ե, վոր այդ խնդիրն առաջնակարգ խնդիրներից մեկն ե: Այդ սասին էրկար խոսվեց, բայց այդ հարցը պետք ե դարձնել լուրջ ուշադրության խնդիր, և վատ չի լինի, յեթե ավտորիտետ հանձնաժողով լինի, վորն այդ հարցով զբաղվի և լուրջ ուսումնասիրի: Դա չափազանց կարեոր ե: Այստեղ պիտի ուշադրության արժանի դարձնել այն անկանոնությունը, վորը նկատվում

և Ալլահվերդում, Ղափանի, Պեմզայի ու ալլ արդյունաբերական ռայոններում մթերքներ մատակալսրաբելու գործում: Իհարկե հիմնականում դա կապված ե այն դժվարությունների հետ, վոր ընդհանուր ե բոլոր վարերի համար: Բայց չի կարելի պատկերացնել, թե ինչու այդքան խայտառակ զրության մեջ են Ալլահվերդին ու Ղափանը: Անկասկած այստեղ կա անփութություն ու անուշադրություն ու անկասկած ե վորոշ մարմինների պատասխանատվության հարցը: Ամենից առաջ ռայոնային կազմակերպությունները պիտի գոռան այդ մասին, Նրանց պատասխանատվությամբ պիտի կարծ ժամանակում բարելավել այդ վայրերի պարենավորումը: Սա չափազանց կարեոր ե աշխատանքների բարձրացման, թե սպեցի և թե բանվորի զրության բարելավման համար: Վերջին հարցը՝ սոցիալիստական մրցակցության խնդիրն ե: Սոցիալիստական մրցակցությունը գեռևս շատ անբավարար ե մեզ մոտ: Այստեղ պիտի աշխատել, վորպեսզի այդ հարցի կիրառման ընթացքում չինովական բյուրոկրատական վերաբերմունք չլինի: Սոցիալիստական մրցակցությունը պետք ե բյուրոկրատիզմի առաջն առնի, և այդ ե նրա գլխավոր նպատակներից մեկը՝ լինելով ինքնաքնաղատության ամենաբարձր արտահայտություններից մեկը. նա պայքարում ե բյուրոկրատիզմի գեմ, նա ազատագրում ե բյուրոկրատիզմից մեր խորհրդակին, կուսակցական, պրոֆեսսիոնալ որգանները, կուսակցական ու ամենից առաջ պրոֆեսսիոնալ կազմակերպությունները պիտի աշխատեն խուզս տալ բյուրոկրատիկ խնամակալությունից ու կենտրոնաձիգ ավելորդ աենդենցներից, ոժանդակեն ներդրավել մրցակցության մեջ նոր ու նոր ձեռնարկություններ, ցիկներ, ցյուղեր, կոլխոզներ ու սովխոզներ: Մրցակցությունը սերտ կերպով պիտի կապված լինի ինքնաքնաղատության լոգունի կիրառման ու ծավալման հետ, նա պետք ե վզչնչացնի պրոգունները, բրակը, բարձրացնի աշխատանքի արտադրողականությունը, նա պիտի հարգածի բյուրոկրատիզմը, անփութությունը, անպատճանատվությունը և անտնտեսավարությունը: Մեր թշնամիներն ասում են, վոր նոր բան են հնարել բայց կիսները—սոց. մրցում, վազն ել մի նոր բան կհնարեն: Նրանք համարում են այդ տոնական յերեսությ, վորը նրանց կարծիքով վոչինչ չի տա մեր ժողովրդական տնտեսությանը: Ընկերներ, գուք զիտեք, վոր դա խաղի բան չի և վոչ ել տոնական յերեսությ ե: Ընկ. Ստալինը ե Մեկույնայի զրությի առաջարանն այսպես ե սկսում.

«Հազիվ թե կարելի լի կասկածել, վոր մեր սոցիալիստական շինարարության ամենակարենը փաստերից մեկը, յեթե վոչ ամենակարենը, ովլալ մըմենտում հանդիսանում ե բանվորների միլիոնավոր»

մասսաների լայնորեն ծավալվող մրցությունը, «Աշխատավոր մասսաների հզոր արտադրական վերելքն սկսվել են»:

Այս հարկադրված են այժմ խոստովանել ամենայիշղվյալ սկսաբուկները:

Ընկեր Ստալինը հիմնվում ե ընկ. Լենինի հետևյալ խոսքերի վրա. «Սոցիալիզմը վոչ միայն չի մարում մրցությունը այլև, ընդհակառակը, առաջին անդամ հնարավորություն ե ստեղծում կիրառել այն ինկապես լայնորեն, իսկապես մասսայական չափերով, իսկապես աշխատավորների մեծամասնությունը քաշել աշխատանքի այնպիսի ասպարեզ, վորտեղ նրանք կարող են յերեան բերել իրենց կարողությունները, լայնորեն գործադրել իրենց ընդունակությունները, դրսեվորել իրենց տաղանդները, վորոնք թագնված ձևով գոյություն ունեն ժողովրդի մեջ և վորոնց կապիտալիզմը տրորել ե, ճնշել, խեղդել հազարներով ու միլիոններով... Զեռնունակություն (որդունակություն), մրցություն և համարձակ նախաձեռնություն յերեան բերելու հնարավորության լայնորեն, իսկապես մասսայաբար ստեղծումը միայն այժմ ե կարելի դառնում...

«Ճարյուրամյակներով ուրիշների համար աշխատելուց հետո առաջին անգամ հնարավոր ե դառնում աշխատել իր համար»:

«Եյժմ, յերբ սոցիալիստական կառավարությունն իշխանության գլուխ ե անցել մեր խնդիրն ե՝ մրցություն կազմակերպել»:

Ընկ. Լենինի այս խոսքերից յելնելով՝ 16-րդ կուսկոնքներենցիան կոչ ուղղեց սոցիալիստական մրցակցության մասին միության բանվորներին ու աշխատավորներին: Սոցիալիստական մրցակցությունն ամենորդա սիստեմատիկ աշխատանք ե սոցիալիզմի համար: Յեթե բյուրոկրատներն ուզում են այն դարձնել գրասենեկալին գործ, ինիցիատիվայից գրկել այն, ապա վոմանք ել ուզում են այն դարձնել հանդիսավոր, դամարալի, տոնական բնույթ կրող. մի յերեսություն այդ նրանց չի հաջողվում: Սոց. մրցակցությունը՝ այն շարժիչ ուժն ե, վորը կոնի մեզ իրագործել մեր սմեծ գործերից պլանի հսկայական ինդիրները: Ամենամեծ՝ պատասխանատվությունն ու ղեկավարությունն այս գործում ընկնում ե պրոֆմիությունների վրա:

Զենք սիստի, յեթե ասենք, վոր այս շրջանում պրոֆմիութենական գծով տարած աշխատանքների կենարոնը կազմում ե սոցիալիստական մրցակցության հարցը: Դրանցից ավելի պատվավոր ու մեծ հարց այժմ նա չունի: Միքանիսը կարծում են, վոր սոցիալիստական մրցակցության իրականացման համար ամենալիկավորը պահանջվում ե մասսաներից: Ճիշտ ե, այն, ինչ մասսաները կարող են

տալ, նրանք տալիս են: Պետք ե պահանջել և տնտեսավարներից: մեզ մոտ տնտեսավարները մոռանում են, վոր սոցիալիստական մրցակցության մեջ նրանք ահագին դեր ունեն կատարելու: Որինակ՝ արտադրողականությունը բարձրանում է, իսկ տնտեսավարի կողմից չի հայտնաբերվում այն, ինչ վոր հարկավոր ե: ստացվում են պրոտոյներ: Վոմանք ել կարծում են, վոր տեխնիկները և ինժեներներն այդ գործում անելիք չունեն: Զափազանց սխալ ե այդ: Այն տեխնիկները, վորոնք մասնակցություն չունեն այդ գործում, այն ինժեներները վորոնք մասնակցություն չունեն այդ գործում, նրանք վատ ինժեներներ են, վատ տեխնիկներ են:

Ամենագլխավոր դերն ալպտեղ ընկնում ե պրոֆմիությունների վրա: Նրանք պետք ե ղեկավարեն և աղատագրեն թուլուկրատական և չինովիկական վերաբերմունքից սոցիալիստական մրցակցությունը: Ընկ. Ստալինն ասել ե. «Սոցիալիստական մրցակցությունը մասսաների գործարար, հեղափոխական ինքնաքննադատության արտահայտությունն ե՝ հենքած միլիոնավոր աշխատահրաների ստեղծագործ նախաձեռնության վրա»:

«Ամեն վոք, վոր կաշկանդում ե, —գիտակցաբար, թե անգիտակցաբար, —այդ ինքնաքննադատությունը և մասսաների ստեղծագործ նախաձեռնությունը, պետք ե դեն շպրտվի ճանապարհից, վորպես մեր մեծ գործի խանգարիչ»:

Ուրեմն հեղափոխական ինքնաքննադատություն ու ստեղծագործական ինիցիատիվական սոցիալիստական մրցակցության արտահայտությունը: Ո՞վ կարող ե դիմանալ այդ ուժին, միվ կարող ե հակառակվել կամ զապել այդ ուժը. ով վոր լինի կջախջախվի, վորովհետև ալդ հսկալական շարժիչ ուժը սարքեր անդահան կանի: Գատանական բան չե, վոր ալսոր միացյալ պլենումը քննում ե տնտեսական հարցերի հետ կուսակցություն շարքերի գտան ու կոմերիտական հաղմակերպության հարցերը: Անկասկածելի լի, վոր այդ հարցերը սերտ կերպով կապված են իրար հետ: Կուսակցությունն այսոր սկսում ե իր շարքերի գլխավոր գառնի ու մաքրումը՝ բոլոր վոչ կոմմունիստական եկեմնաներից պատվելու մեծ գործը: Կուսակցության շարքերից անխնաղուրս պիտի շպրտվեն կոմմունիստական դեմքը կորցը բած մարդիկ, նրանք, վորոնք կուսակցական գլխավոր գիծն անընդունակ են այլևս անշեղ անցկացնելու, նրանք, վորոնք անընդունակ են կոլլեկտիվիստական վոգով աշխատելու, նրանք, վորոնք կոմկուսի լերկաթյա գիսցիպիլնան են խախտում, նրանք, վորոնք ընկնում են բուրժուական-կուլտակային աղդեցությունների տակ, նրանք, վորոնց

համար խորթ ե պրոլետարական իդեոլոգիան, վորոնք անընդունակ են ամբացնելու պրոլետարիատի դասակարգային դիրքերը, բոլոր կարէերիստները, շկուրնեկները, ազգայնական հակումներով գրավվողները և այլն և այն ինարկե՝ մեղ մոտ մանավանդ հաճախ կարող ե լերեան գալ զտման ժամանակ այս կամ այն ընկերների կողմից, կամ իորթ ու թշնամի միջավայրի ազգեցության տակ գտնվող անհատների կողմից, զանազան անձնական հաշիվներ, սկլոկային հակումներ, դիսկրետացիա անող յերկութներ և այն և այլն:

Կուսկազմակերպութիունն ու այն անկուսակցական բանվորական ու աշխատավորական մասսաները, վորոնք ակտիվ կերպով կներգրավվեն կուսարքերի զտման գործին, մամուլի, բանվորների ու գուղացիների ոգնությամբ, կարող կլինեն այնպես տանել զտման ու մաքրըման գործը, վոր կուսակցութիունը դուրս կգա այդ մաքրման բոլից ավելի ամուր, ավելի միասնական, ավելի ընդունակ իկատար ածելու կուսակցության ընդհանուր ինդիրները և բարձրացնելու մասսաների ակտիվությունն ու զործնական աշխատանքները սոցիալիզմի հաղթական գործում։ Նույնը պիտի ասել և խորհրդացին ապահարատի զտման հարցի վերաբերյալ։ Դեռևս շատ հաճախ նկատվում են վորոշ խորհրդացին հիմնարկների վորոշ ողակներում ինեղաթիուրումներ ու սալֆաքումներ կուսակցական դասակարգային զծից։ Ամենաուժեղ պայքարը բյուրոկրատիզմի դեմ, կազմալուծված ելեմենտների դեմ, անհարազատ տարրերի դեմ խորհրդացին ապահարատում։ Ամենավճռական կերպով առաջ քաշել սոցիալիզմ կառուցողների նոր ու նոր կադրեր բանվորների, բատրակների ու չքափոր ու միջակ գյուղացիների շարքերից։ Մեր խորհրդացին ապահարատը դեռևս շատ ու շատ մաքրման—կարգավորման կարիք ունի, սուուց ու ճշգրիտ կատարելու համար կուսակցության առաջ դրված ինդիրները։

Ինչ վերաբերում ե կոմսոմոլին, այդ մասին այստեղ շատերն արտահայտվեցին, պարզ ե, վոր ներկա շրջանում մանավանդ կոմսոմոլը պիտի լինի կուսակցության ամենահավատարիմ ոգնականը, կոմսոմոլի ամենագլխավոր ինդիրներից մեկն ե՝ պահպանել լինինյան զծի անաղարտությունը։ Կոմսոմոլը պիտի տա նոր ու նոր կադրեր սոցիալիստական շինարարության համար։ Կոմսոմոլը պիտի լինի դասակարգութին պարքարի առաջին շարքերում գյուղում ու քաղաքում, կոմսոմոլը պիտի իր բոլոր ուժերը տրամադրի հնգամյակն իշականացնելու համար, նա պիտի համակվի չտեսնված վողերությամբ ու տոգորի ամենալայն աշխատավորական խավերը կուսակցության ենինյան գաղափարներով։

Այսոր, յերբ մեր բոլոր աշխատանքների շեշտը դրվում ե արտագրական պրոցեսաների վրա, այսոր, յերբ մեր հաջողությունների չափանիշն ե, թե վնարքան արդյոք մենք կարողացել ենք ավելի լավ արտադրել, սովորեցնել մեր մասսաներին, այսոր ավելի քան պատվագոր ու մեծ են յերիտասարդ բայլլեկների անելիքները։

Առաջ ել միշտ մեր առաջ դրվում ե յեղել լավ արտադրելու լոգունզը, իսկ այսոր, ել ավելի քան յերբեքցե, պիտի մեր անելիքների կենտրոնում գնենք լավ ու հաջող արտադրելու լոգունզն ու արտագրական սմիչկայից բղխող դիրքերի ամրացումը։ Դա ուկօնստրուկտիվ շրջանի, Նեղ-ի յերկրորդ շրջանի զլխավոր լոգունզն եւ։

Ուրիշ խոսքով, ինչպես շատ ճիշտ կերպով շեշտեց ընկ. Ստալինը 15-րդ համագումարում, կենինի իր ժամանակին տրված հարցը՝ «ովում»—այժմ տեղափոխվում ե արտադրության ասպարեզը։ Յեթե Նեղ-ի առաջին շրջանում, վերականգնման շրջանում այդ պրոբեմը դրված եր գլխավորապես առեւտրի, շուկայի բնագավառում, այսոր, Նեղ-ի յերկրորդ շրջանում, ուեկոնստրուկտիվիցի շրջանում այդ պրոբեմը տեղափոխվում ե արտադրության բնագավառը։ Այժմ ամենից ավելի պիտի ջանալ լավ ու հաջող արտազրկել։

Ահա այն ողակը, վորից պինդ կպչելով՝ կարող կլինենք դուրս քաշել սոցիալիստական շինարարության ամբողջ շղթան։ Ահա այն առանցքը, վորն իրականություն կդարձնի հնգամյա պլանը, Ոգտագործել մեր տրամադրության տակ յեղած բոլոր հնարավորությունները, Մորիկիզացիայի լինթարկել մեր բոլոր ուսուուրսները, իմի հավաքել մասսաների եներգիան, կամքն ու ուշագրությունը մեր ժողովրդական տաեւության գլխավոր խնդիրների վրա, և կարելի կլինի իրագործել հնգամյակը, լոգունզ ունենալով կենինի հետեւյալ պատգամը։

«Խնաճքով ու բարեխիղճ պահել փողերի հաշիվը, անտեսավարիւ խնաճքաբար, մի ծուլանա, մի գողանա, աշխատանքի մեջ կարգ ու կանոն ունեցիր», — հենց այսպիսի լոգունզներն են, վոր բուրժուազիայի իր, իրեկ շահագործող գասակարգի, տիրապետությունը նման ճառաբով սքողելու պահուն իրավամբ ծաղրված լինելով հեղափոխական պրոլետարիատի կողմից, այժմ, բուրժուազիայի տապալումից հետո, մոմենտի հերթական և գլխավոր լոգունզ են դառնում։ Յեվ աշխատավորների մասսայի կողմից այդ լոգունզների գործնական կենսագոր-

ծումը հանդիսանում ե, մի կողմից, լրեկրի փրկության միակ պայմանը... մյուս կողմից՝ այդ լողունգների գործնական կենսագործումը խորհրդային իշխանության կողմից, նրա մեթոդներով՝ նրա որենքների հիման վրա,—անհրաժեշտ ե բավարար սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար, անհրաժեշտ ե բավարար սոցիալիզմի կառուցման համար»:



## «Ազգային գրադարան



ML0207468

Зд. З17

**А. Костанян**

Очередные задачи нашего хозяйственного строительства

Библиотека  
Института  
Фотоподседения  
Академии Наук  
СССР



916 20 ч.